ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
(2014-2015)

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվել է և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2014 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 12-Ա հրամանով:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով և այլ իրավական ակտերով:

Հանձնաժողովի խնդիրներն են՝ նպաստել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողին ներկայացվող բարոյական բարձր չափանիշների ձևավորմանը, նպաստել ծառայողական կարգապահության ամրապնդմանը, նպաստել կարգապահական խախտումների կանխարգելմանը և այդպիսիք ծնող պատճառների վերացմանը, ապահովել Կոմիտեի ծառայողի անկախությունը և իրավունքների պաշտպանությունը, կանխել Կոմիտեի ծառայողին անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Հանձնաժողովը քննարկում է կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդությունները, տալիս է եզրակացություններ, ընդունում է ընթացակարգային և ըստ էության որոշումներ:

Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումներ.....00

2. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքից քաղվածք 00

3. «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին⑦ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրաման.....00

4. ««Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ» ՀՀ ՔԿ կարգապահական հանձնաժողովի արձանագրային որոշում....00

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումներ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

քաղ. Երևան 13 մարտի 2015թ.

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզի քննչական վարչության նախկին քննիչ, ներկայիս՝ Կոտայքի մարզի քննչական վարչության քննիչ Վիգեն Մարգարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2015թ. հունվարի 30-ին Շիրակի մարզի դատախազը միջնորդություն է ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին միջնորդելով՝ ծառայողական քննություն անցկացնել Շիրակի մարզի քննչական վարչության քննիչ Վիգեն Մարգարյանի նկատմամբ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Վ. Մարգարյանին վերագրվող առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների:

1. **Քրեական գործով անհրաժեշտ հանգամանքներ պարզելու համար քննիչ Վ. Մարգարյանը չի հարցաքննել Գ. Մելքոնյանի խցակիցներին:**

Քննիչ Վ. Մարգարյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ դատապարտյալ Գ. Մելքոնյանի խցակիցներին չի կարողացել հարցաքննել, քանի որ աշխատել և բնակվել է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում, իսկ Գ. Մելքոնյանի խցակիցները գտնվել են Գեղարքունիքի մարզի «Սևան» ՔԿՀ-ում: Չունենալով ավտոմեքենա, հեռավորության, ինչպես նաև վարույթում գտնվող շուրջ 15 քրեական գործերով ծանրաբեռնված լինելով՝ չի կարողացել կատարել դատախազի նշված ցուցումը /հ-1, ն.թ. 102-108/:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչ Վ. Մարգարյանը Գ. Մելքոնյանի խցակիցներին հարցաքննելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում (խցակիցները հնարավոր տեղափոխությունները, ազատ արձակումը և այլն) չի հարցաքննել Գ. Մելքոնյանի խցակիցներին, որի հետևանքով հնարավոր չի եղել պարզել տուժողի և Գ. Մելքոնյանի ցուցմունքներում առկա մի շարք հանգամանքներ, ինչպես նաև ձեռք չեն բերվել Գ. Մելքոնյանի կատարած հանցանքը հիմնավորելու համար լրացուցիչ ապացույցներ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Վ. Մարգարյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. **Քննիչը չի պարզել և չի հարցաքննել Գ. Մելքոնյանի անձնական էջի ստեղծման համար օգտագործված հեռախոսահամարի բաժանորդի ինքնությունը, ինչի վերաբերյալ միայն՝ 22.10.2014թ. է միջնորդություն ներկայացրել դատարան: Քննիչը չի պարզել անհատական էջի հասանելիություն ստացած IP հասցեները, այդպիսիք պարզելու համար միայն՝ 28.10.2014թ. է միջնորդություն ներկայացրել դատարան: Քննիչը «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ ընկերությունից չի ստացել քրեական գործով անհրաժեշտ տեղեկություններ:**

Քննիչ Վ. Մարգարյանը բացատրություն է տվել, որ ծանրաբեռնվածությունից ելնելով՝ շուրջ երկու ամիս հետո է ձեռնարկել Գ. Մելքոնյանի անձնական էջի ստեղծման համար օգտագործված հեռախոսահամարի բաժանորդին, համացանցի անհատական էջի հասանելիություն ստացած IP հասցեները պարզելու և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ից քրեական գործով անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու ցուցումում նշված պահանջների կատարմանը /հ-1, ն.թ. 102-108/:

Կարգապահական հանձնաժողովը լսելով քննիչ Վ. Մարգարյանին և ուսումնասիրելով նյութերը պարզեց, որ քննիչն անհրաժեշտ ջանասիրություն չի ցուցաբերել նշված գործողությունները ժամանակին կատարելու ուղղությամբ, այն պարագայում, երբ կիբերհանցագործությունների վերաբերյալ գործերի քննության առանձնահատկությունները ինքնին պահանջում են առաջնահերթ և հրատապ կերպով ստուգել անհատական էջի հասանելիություն ստացած IP հասցեները և դրա հետ առնչվող այլ հանգամանքները: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Վ. Մարգարյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

1. **Քննիչը տուժող Ա. Գրիգորյանի բժշկական փաստաթղթերը չի տրամադրել փորձագետներին, ինչի պատճառով դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փորձաքննության կատարումն ամիսներ շարունակ ձգձգվել է:**

Քննիչ Վ. Մարգարյանը բացատրություն է տվել, որ դատահոգեբանական և դատահոգեբուժական համալիր փորձաքննության կատարումը ձգձգվել է միայն ՀՀ ԱՆ կից ամբուլատոր միջգերատեսչական դատահոգեբուժական հանձնաժողովի անդամների վերակազմավորման, այնուհետև՝ նրանց ծանրաբեռնվածության պատճառով: Կազմված արձանագրություններով և հիշեցումներով փորձել է արագացնել փորձաքննության կատարումը, սակայն չի կարողացել /հ-1, ն.թ. 102-108/:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով քննիչի բացատրությունները և ուսումնասիրելով նյութերը, պարզեց, որ սույն դրվագով քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն փորձաքննությունն իրականացնող փորձագետների բացատրությունների, տուժողի բժշկական փաստաթղթերը փորձաքննությանը չներկայացնելը չի հանդիսացել փորձաքննության կատարման ձգձգման պատճառ: Քննիչը կատարել է տուժողին մի քանի անգամ փորձաքննության ներկայացնելու դատահոգեբույժ փորձագետների պահանջը, բացի այդ, հաճախ գրավոր հիշեցումներ է ուղարկել փորձագիտական հիմնարկ: Փորձաքննության կատարումը ձգձգվել է ՀՀ ԱՆ կից ամբուլատոր միջգերատեսչական դատահոգեբուժական հանձնաժողովի անդամների վերակազմավորման պատճառով, ինչից հետո՝ հերթական կարգով կատարվել են ամիսներ շարունակ կուտակված փորձաքննությունները /հ-1, ն.թ. 140-147/:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Վ. Մարգարյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործով անհրաժեշտ հանգամանքներ պարզելու նպատակով Գ. Մելքոնյանի խցակիցներին չհարցաքննելու դրվագով քննիչ Վ. Մարգարյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ).
2. Ողջամիտ ժամկետներում Գ. Մելքոնյանի անձնական էջի ստեղծման համար օգտագործված հեռախոսահամարի բաժանորդի ինքնությունը չպարզելու և չհարցաքննելու, անհատական էջի հասանելիություն ստացած IP հասցեները չպարզելու, «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ից քրեական գործով անհրաժեշտ տեղեկություններ չստանալու դրվագով քննիչ Վ. Մարգարյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ).
3. Տուժող Ա. Գրիգորյանի բժշկական փաստաթղթերը փորձագետներին չտրամադրելու պատճառով դատահոգեբանական-դատահոգեբուժական համալիր փորձաքննության կատարումն ամիսներ շարունակ ձգձգվելու դրվագով քննիչ Վ. Մարգարյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ):

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

27 մարտի 2015թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գոռ Սաղոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Հ.Փիլիպոսյանի 05.03.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ նույն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գոռ Սաղոյանը, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Գ.Սաղոյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

20.02.2015թ. որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 16108215 քրեական գործը հարուցելու և այն վարույթ ընդունելու մասին, սակայն խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 2- րդ մասի և 192-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, նշված որոշման պատճենը դատախազություն է ուղարկել միայն 04.03.2015թ., որի արդյունքում հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը զրկվել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված իր իրավունքներն իրականացնելու՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման օրինականությունը ժամանակին ստուգելու հնարավորությունից:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Գ.Սաղոյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ անուշադրության հետևանքով մոռացել է նշված որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում ուղարկել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն և ընդունում է իր կողմից թույլ տրված դատավարական խախտումը:

Վերը նշված դրվագով կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ավագ քննիչ Գ.Սաղոյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսրքով սահմանված ժամկետներում քրեական գործը հարուցելու որոշման պատճենը չի ուղարկել հսկող դատախազին, որի արդյունքում հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազն զրկվել է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված իր իրավունքներն իրականացնելու՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման օրինականությունը ժամանակին ստուգելու հնարավորությունից, իսկ անձը զրկվել է դատախազական հսկողության սահմանադրական երաշխիքից՝ այսինքն քննիչի կողմից խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի և 192-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործ հարուցելու որոշման պատճենը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում դատախազություն չուղարկելու դրվագով Գ.Սաղոյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Շիրակի մարզի դատախազության դատախազ Ս. Ասլանյանին Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ռ.Սեդրակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով դիրքորոշում ներկայացնելու առաջարկի մասին

27.03. 2015 թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ռևիկ Սեդրակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն իրականացնելիս՝

Պ Ա Ր Զ Ե Ց

Շիրակի մարզի դատախազը մարզային վարչության ավագ քննիչ Ռ.Սեդրակյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջնորդություն է ներկայացրել, որում նշել է, որ ավագ քննիչ Ռ.Սեդրակյանը պարտավոր լինելով քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն երեք օր առաջ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշում ներկայացնել քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, դատավարական ժամկետների խախտմամբ՝ նախաքննության ժամկետը լրանալուց մեկ օր առաջ է նման որոշում կայացրել, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ քր.դատ.օր-ի 197-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված իմպերատիվ պահանջը:

Նյութերի նախապատրաստության ընթացքում վարույթն իրականացնող քննիչը բացատրություն է տվել այն մասին, որ թիվ 68159814 քրեական գործը հարուցվել է 08.12.2014թ.-ին: Հաջորդ օրը որոշում է կայացրել նշված քրեական գործը վարույթ ընդունելու մասին և ձեռնամուխ եղել նախաքննության կատարմանը: Քրեական գործով կատարելով անհրաժեշտ բոլոր քննչական և դատավարական գործողությունները և համարելով, որ կատարված նախաքննությամբ ձեռք է բերվել բավարար ապացույցների համակցություն Տ.Կիրակոսյանին գործով որպես մեղադրյալ ներգրավելու համար, 06.02.2015թ. որոշում է կայացրել նրան ՀՀ քր.օր-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և հաշվի առնելով, որ նա թաքնվել է քննությունից, նրա նկատմամբ հայտարարել է հետախուզում և որպես խափանման միջոց ընտրել ստորագրություն չհեռանալու մասին: 07.02.2015թ. ոստիկանության Կումայրիի բաժնից հաղորդում ստանալով, որ հայտնաբերվել և քննության է ներկայացվում Յ.Կարապետյանին պատկանող «Վազ-2108» մակնիշի 35 ՐՕ 606 հաշվառման համարանիշի ավտոմեքենան և ավտոմեքենայի գնորդ Ա. Բաղդասարյանը, այդ մասին զեկուցել է վերադասին: Նույն օրը Ա.Բաղդասարյանը հարցաքննվելով դեպքի հանգամանքների շուրջ տվել է ցուցմունքներ, որից հետո անհրաժեշտություն է առաջացել շարունակել նախաքննությունը, ինչը և կատարել է 2015թ. փետրվարի 7-ին և 8-ին, մասնավորապես, զննել է ավտոմեքենան, նշանակել է դատաապրանքագիտական փորձաքննություն, հարցաքննել մի շարք վկաների: Իր, իսկ այնուհետև քննչական վարչության պետի տեղակալ Ե.Հակոբյանի կողմից վերը նշված հանգամանքները քննարկվել են հսկող դատախազ Ս.Ասլանյանի հետ, միաժամանակ նրան տեղյակ պահելով, թվարկված գործողությունները կատարելուց հետո, քրեական գործով վարույթը 09.02.2015թ., այսինքն՝ ժամկետի վերջին ոչ աշխատանքային օրվան հաջորդող օրը կասեցնելու մասին: Դատախազ Ս.Ասլանյանը բանավոր ցուցում է տվել քրեական գործով վարույթը չկասեցնել և 2015թ. փետրվարի 7-ին որոշում կայացնել նախաքննության ժամկետը երկու ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, ինչը և կատարվել է իր կողմից:

Կարգապահական հանձնաժողովի 27.03.2015թ.-ի նիստին Շիրակի մարզային քննչական վարչության պետ Ս.Սիմոնյանը բացատրություն է տվել այն մասին, որ 2015թ. փետրվարի 2-ին քրեական գործը քննարկվել է իր հետ, որի արդյունքում որոշվել է անհրաժեշտ բոլոր գործողությունները կատարելուց հետո՝ Տ. Կիրակոսյանին չհայտնաբերելու դեպքում, քրեական գործով վարույթը նախաքննության ժամկետի ավարտին կասեցնել, մինչև մեղադրյալի հայտնաբերվելը: 2015թ. փետրվարի 7-ին ոստիկանության Կումայրիի բաժնից հաղորդում է ստացվել, որ հայտնաբերվել և քննության է ներկայացվում Յ.Կարապետյանին պատկանող ՎԱՋ 2108 մակնիշի ավտոմեքենան և ավտոմեքենայի գնորդ Ա.Բաղդասարյանը: Նշված հանգամանքը քննիչը զեկուցել է վարչության պետի տեղակալ Ե.Հակոբյանին, իսկ վերջինս էլ՝ իրեն: Իր կողմից ցուցում է տրվել հարցաքննել Ա.Բաղդասարյանին, զննել ավտոմեքենան, նշանակել ապրանքագիտական փորձաքննություն և գործով վարույթը կասեցնել 08.02.2015թ.: Իր հանձնարարությամբ քննիչ Ռ. Սեդրակյանի, իսկ այնուհետև իր տեղակալ Ե.Հակոբյանի կողմից վերը նշված հանգամանքները քննարկվել են հսկող դատախազ Ս.Ասլանյանի հետ, միաժամանակ նրան տեղյակ պահելով, վերը թվարկված գործողությունները կատարելուց հետո, քրեական գործով վարույթը 09.02.2015թ., այսինքն՝ ժամկետի վերջին ոչ աշխատանքային օրվան հաջորդող օրը կասեցնելու՝ վարույթն իրականացնող մարմնի դիրքորոշման մասին:

Հսկող դատախազ Ս.Ասլանյանը քննիչին բանավոր ցուցում է տվել քրեական գործով վարույթը չկասեցնել և 07.02.2015թ. որոշում կայացնել նախաքննության ժամկետը երկու ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին և երբ նրան բացատրվել է, որ ցուցումը կատարելու դեպքում դատավարական ժամկետները կխախտվեն, դատախազ Ս.Ասլանյանը պնդել է իրենը, ասելով, որ ՀՀ քր. դատ. օր-ի 193-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն 24 ժամվա ընթացքում իր կողմից տրված բանավոր ցուցումը կձևակերպի գրավոր ցուցումի և կուղարկի քննչական վարչություն: Այդ պայմաններում դատախազի ցուցումը ենթակա էր պարտադիր կատարման և դրա բողոքարկումը չէր կասեցնելու ցուցումի կատարումը, հետևաբար, քննիչի կողմից դատախազի ցուցումի համաձայն կայացվել է հիշյալ որոշումը և 09.02.2015թ. քրեական գործի հետ միասին ուղարկվել դատախազություն: Մինչ օրս դատախազի կողմից տրված բանավոր ցուցումը գրավորի չի վերածևակերպվել, որի կապակցությամբ իր կողմից մարզի դատախազին ուղարկվել է գրավոր առարկություն: Դատախազի կողմից իր բանավոր ցուցումը 24 ժամվա ընթացքում գրավոր ցուցումի չձևակերպելը քրեական վարույթն իրականացնող մարմնին կանգնեցրել է փաստի առաջ:

Ս.Սիմոնյանը նշել է նաև, որ երբ մարզի դատախազությունից ստացել է ծառայողական քննություն անցկացնելու մասին դատախազի միջնորդության պատճենը, զանգահարել է հսկող դատախազ Ս.Ասլանյանին և նրանից պահանջել պարզաբանումներ, թե ինչու է իրենց ցուցումով կատարված գործողության համար մարզի դատախազը նման միջնորդություն հարուցել: Վերջինս իրեն պատասխանել է, որ ինքը մարզի դատախազին զեկուցել է, որ այդ որոշումը կայացվել է իր բանավոր ցուցումով, բայց դատախազն այդ կերպ է որոշել, հաշվի չառնելով իր ներկայացրած հանգամանքները, ըստ էության փաստի առաջ կանգնեցնելով նաև դատավարական ղեկավարումն իրականացնող դատախազին:

Կարգապահական հանձնաժողովում, վարույթն իրականացնելիս, հաստատվել են հետևյալ հանգամանքները.

- Քննիչ Ռ. Սեդրակյանի նկատմամբ վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել ՀՀ դատախազության Շիրակի մարզի դատախազ Ր. Ասլանյանի՝ ծառայողական քննություն անցկացնելու մասին միջնորդությունը,
- թիվ 68159814 քրեական գործով վարույթն իրականացրել է ավագ քննիչ Ռ. Սեդրակյանը, իսկ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն է իրականացրել Շիրակի մարզի դատախազության դատախազ Ս. Ասլանյանը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը կարող է դիմել հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող համապատասխան մարմնին հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ:

Սույն վարույթով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել է ոչ թե նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, այլ վերադաս դատախազը: Կարգապահական վարույթի ընթացքում ուսումնասիրված նյութերում վկայակոչվում են հսկողություն իրականացնող դատախազի գործողությունները, մինչդեռ նրա դիրքորոշումը որևէ կերպ արտահայտված չէ:

Նկատի ունենալով, որ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը չի ներկայացվել հսկողություն իրականացնող դատախազի կողմից, ինչպես նաև հաշվի առնելով վարույթի փաստական հանգամանքների առանձնահատկությունները և դրանց համակողմանի քննության կարևորությունը, անհրաժեշտ է ապահովել հսկող դատախազ Ս. Ասլանյանի կողմից կարգապահական հանձնաժողովին դիրքորոշում ներկայացնելու հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 13-րդ կետի 3-րդ ենթակետով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Առաջարկել Շիրակի մարզի դատախազության դատախազ Ս. Ասլանյանին՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ռևիկ Սեդրակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով վերոնշյալ հանգամանքների վերաբերյալ կարգապահական հանձնաժողովին ներկայացնել գրավոր կամ բանավոր դիրքորոշում:
2. Հանձնարարել կարգապահական հանձնաժողովի քարտուղարին Շիրակի մարզի դատախազության դատախազ Ս. Ասլանյանին տեղեկացնել կարգապահական հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի մասին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական իրավախախտման փաստի բացակայության մասին

քաղ. Երևան 27 մարտի 2015թ.

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը քննարկելով նույն հանձնաժողովի անդամ Սարգիս Թորոսյանի միջնորդությունը՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզի քննչական վարչության ավագ քննիչ Է. Թումասյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ, որոշել է բավարարել այն և ավագ քննիչ Է. Թումասյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Է. Թումասյանին վերագրվող հետևյալ առերևույթ իրավախախտման դրվագները.

1. Ա. Գրիգորյանին և Ա. Փիլոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու դատախազի ցուցումը չկատարելու առերևույթ խախտում:

Քննիչ Է. Թումասյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ ի կատարումն դատախազի 02.10.2014թ. ցուցումի պահանջների, իրականացրել է անհրաժեշտ բոլոր քննչական և այլ դատավարական գործողությունները, ինչից հետո պետք է որպես մեղադրյալ ներգրավեր Ա. Գրիգորյանին և Ա. Փիլոսյանին: Քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու համար գործն ուղարկվել է դատախազություն: Անհասկանալի պատճառով դատախազն իրեն հեռացրել է քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց, պատճառաբանելով, որ չի կատարել դատախազի ցուցումը և որպես մեղադրյալ չի ներգրավել նշված անձանց: Նշված պատճառաբանությունը չի համապատասխանել նրա իսկ ցուցումի ամփոփիչ մասին:

Կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազի ցուցումը, պարզել է, որ նշված փաստաթղթում վերը նշված դրվագի վերաբերյալ առկա են անորոշ դատողություններ: Այսպես, Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Ս. Ալանյանը 2014թ. հոկտեմբերի 2-ի ցուցումի վերջին էջի 6-րդ պարբերությունում նշել է, որ. «... քննիչն ունենալով հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցներ, Ա. Գրիգորյանին և Ա. Փիլոսյանին չի ներգրավել որպես մեղադրյալ և վերջիններս առ այսօր չեն հարցաքննվել ... »: Ցուցումի նույն էջի վերջին պարբերությունում, դատախազն ամփոփելով ցուցումի պահանջները, հանձնարարել է. «...սեղմ ժամկետում կատարել հանցագործության բոլոր հանգամանքները բացահայտելու, Ա. Փիլոսյանի և Ա. Գրիգորյանի արարքներին քրեաիրավական գնահատական տալու համար էական նշանակություն ունեցող վերը հիշատակված, ինչպես նաև դրանցից բխող այլ քննչական և դատավարական գործողությունները... »: Հսկող դատախազի ցուցումում մի դեպքում նշվում է, որ հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների առկայության պայմաններում քննիչը Ա. Գրիգորյանին և Ա. Փիլոսյանին չի ներգրավել որպես մեղադրյալ, որից երևում է, որ այդ պահին առկա են եղել տվյալ անձանց որպես մեղադրյալ ներգրավելու անհրաժեշտ հիմքեր, սակայն ցուցումի ամփոփիչ հատվածում տրված ձևակերպումից երևում է, որ Ա. Փիլոսյանի և Ա. Գրիգորյանի արարքներին քրեաիրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է եղել կատարել գործողություններ: Կարգապահական հանձնաժողովը կարծում է, որ տվյալ դեպքում հսկող դատախազի՝ քննիչին հասցեագրված ցուցումը չի պարունակում Ա. Փիլոսյանին և Ա. Գրիգորյանին որպես մեղադրյալ ներգրավելու հստակ պահանջ, ցուցումում հստակեցված չէ նաև արարքների քրեաիրավական գնահատականի վերաբերյալ դատախազի դիրքորոշումը: Նման պայմաններում քննիչն ուներ հայեցողություն որոշելու և գնահատելու Ա. Փիլոսյանին և Ա. Գրիգորյանին որպես մեղադրյալ ներգրավելու ժամանակը և փաստական հիմքերի առկայությունը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննարկվող դրվագով հսկող դատախազի տված ոչ հստակ ցուցումի պայմաններում Շիրակի մարզի քննչական վարչության ավագ քննիչ Է.Թումասյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

2. Քննիչի կողմից 18 օր գործողություն չկատարելու և քրեական գործը անշարժ վիճակում մնալու դատախազի ցուցումը չկատարելու առերևույթ խախտումը:

Քննիչ Է.Թումասյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ 04.10.2014թ. մինչև 20.10.2014թ. գրեթե յուրաքանչյուր օր կատարել է քննչական և այլ դատավարական գործողություններ, իրականացնելով դատախազի ցուցումում նշված պահանջները: Անհասկանալի է դատավարական ղեկավարի նման մոտեցումը, ինչը, ցավոք ներառվել է նաև միջնորդության մեջ:

Կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության կողմից կազմված քրեական գործի ժամանակագրական շարժի վերաբերյալ տեղեկանքը, պարզեց, որ քննիչ Է. Թումասյանը վկայակոչվող ժամանակահատվածում կատարել է հետևյալ գործողությունները.

- 04.10.2014թ. – Որոշում կոտրված ապակու կտրոնները և սուրճի բաժակներն իրեղեն ապացույց ճանաչելու մասին.
- 06.10.2014թ. – Որոշում Գ. Ղազարյանին որպես տուժող ճանաչելու մասին, արձանագրություն փորձաքննության եզրակացությունը տուժողին ներկայացնելու մասին, տուժող Գ. Ղազարյանի ցուցմունքը.
- 07.10.2014թ.– Որոշում Է. Աբելյանին որպես տուժող ճանաչելու մասին, արձանագրություն փորձաքննության եզրակացությունը տուժողին ներկայացնելու մասին, տուժող Է. Աբելյանի ցուցմունքը.
- 08.10.2014թ.- Որոշում Հռիփսիմե Ղազարյանին որպես տուժող ճանաչելու մասին, արձանագրություն փորձաքննության եզրակացությունը տուժողին ներկայացնելու մասին, տուժող Հռիփսիմե Ղազարյանի ցուցմունքը.
- 09.10.2014թ. - Որոշում Հասմիկ Ղազարյանին որպես տուժող ճանաչելու մասին, արձանագրություն փորձաքննության եզրակացությունը տուժողին ներկայացնելու մասին, տուժող Հասմիկ Ղազարյանի ցուցմունքը.
- 10.10.2014թ.- Շենքի բնակչուհի Հասմիկ Գևորգյանի ցուցմունքը.
- 11.10.2014թ.- Շենքի բնակչուհի Տիգրանուհի Գևորգյանի ցուցմունքը.
- 12.10.2014թ.–Շենքի բնակիչ Ավետիք Բադալյանի ցուցմունքը.
- 13.10.2014թ.–Ավետիք Փիլոսյանի մայր՝ Անժելա Փիլոսյանի ցուցմունքը.
- 14.10.2014թ.–Շենքի բնակչուհի Արևհատ Բադալյանի ցուցմունքը.
- 16.10.2014թ.–Ավետիք Փիլոսյանի եղբոր՝ Գրիգոր Փիլոսյանի ցուցմունքը.
- 18.10.2014թ.-Շենքի բնակչուհի Մելանյա Սարգսյանի ցուցմունքը.
- 19.10.2014թ.–Տեղեկանք հեռախոսով վկային հարցաքննության հրավիրելու մասին.
- 20.10.2014թ.-Որոշում քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննարկվող դրվագով Շիրակի մարզի քննչական վարչության ավագ քննիչ Է. Թումասյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 13-րդ կետի 1-ին ենթակետով, 59-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով քվեարկության արդյունքները

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ա. Գրիգորյանին և Ա. Փիլոսյանին որպես մեղադրյալ ներգրավելու դատախազի ցուցումը չկատարելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզի քննչական վարչության ավագ քննիչ Է. Թումասյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ):
2. 18 օր գործողություն չկատարելու և քրեական գործը անշարժ վիճակում մնալու դատախազի ցուցումը չկատարելու դրվագով ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզի քննչական վարչության ավագ քննիչ Է. Թումասյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ):
3. Սույն որոշման օրինակն ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

3 ապրիլի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Լևոն Կարապետյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի 27.02.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Լևոն Կարապետյանը, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Լ.Կարապետյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

1. Քննիչ Լ.Կարապետյանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի առերևույթ խախտում՝ նախաքննությունը կատարել է անհարկի ձգձգումներով՝ մասնավորապես չկատարելով դատախազի կողմից 09.10.2014թ. տրված ցուցումի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները, օրենքով սահմանված կարգով միջնորդություն չի հարուցել դատարան՝ Ա.Հովհաննիսյանի, Ս.Չոբանյանի, Վ.Չոբանյանի, Գ.Մկրտչյանի կողմից օգտագործվող հեռախոսահամարներից կատարված ելքային և մուտքային զանգերի վերծանումները ստանալու համար, տուժող Գ.Մկրտչյանի պարանոցին առկա վնասվածքների առաջացման մեխանիզմի շուրջ չի հարցաքննել փորձագետին, ցուցմունքներում առկա էական հակասությունների շուրջ առերես չի հարցաքննել Գ.Մկրտչյանին և Ս.Չոբանյանին, Վ.Չոբանյանին Ա Ա.Հովհաննիսյանին, Վ.Չոբանյանին և Գ.Մկրտչյանին:

Վերը նշված խախտման վերաբերյալ Լ.Կարապետյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ թիվ 15145714 քրեական գործով դատախազի ցուցումի պահանջների համաձայն 21.10.2014թ. լրացուցիչ հարցաքննել է տուժողներ Ա.Հովհաննիսյանի և Գ.Մկրտչյանի՝ միջադեպի ընթացքում ստացած մարմնական վնասվածքների, ՀՀ ոստիկանություն կատարված ահազանգի, միջադեպի ծագման պատճառի և մի շարք այլ հանգամանքների շուրջ:

24.10.2014թ. հանձնարարություն է տվել ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնին՝ դեպքին ականատես վկաներ հայտնաբերելու, Վ.Չոբանյանի ընկերների ինքնությունը և միջադեպին նրանց մասնակցության հարցը պարզելու ուղղությամբ: Լ.Կարապետյանը նշել է նաև, որ նախաքննության ընթացքում ձգձգումներ իրոք եղել են, սակայն դրանք ունեն օբյեկտիվ պատճառներ: Ինչ վերաբերում է միջնորդության մեջ նշված դատախազի ցուցումի 2-

րդ կետին, ըստ որի օրենքով սահմանված կարգով նշված ժամանակահատվածում չի ստացվել Ա.Հովհաննիսյանի, Գ.Մկրտչյանի, Ս.Չոբանյանի և Վ.Չոբանյանի կողմից օգտագործվող բջջային հեռախոսահամարների վերծանումները, որով հնարավոր կլիներ պարզել Վ.Չոբանյանի ընկերների ինքնությունը, ապա դա չի կատարել: Լ.Կարապետյանը դա բացատրել է նրանով, որ վերջիններիս ինքնությունը պարզելու ուղղությամբ հանձնարարություններ էր տվել հետաքննության մարմնին, որոնց պատասխանները դեռևս չէր ստացել: Քննության ընթացքում պլանավորել էր, հետագայում հակասությունների առկայության և նշված անձանց ցուցմունքների արժանահավատությունը ստուգելու նպատակով կատարել ցուցումի մեջ նշված քննչական գործողությունը:

Ինչ վերաբերում է ցուցումի 3-րդ և 4-րդ կետերը չկատարելուն, ապա Լ.Կարապետյանը նշել է, որ Գ.Մկրտչյանի պարանոցի վրա առկա վնասվածքների առաջացման մեխանիզմը պարզելու վերաբերյալ թիվ 2421 եզրակացության հիման վրա փորձագետին չի հարցաքննել, հարցաքննությունը պլանավորվել էր կատարել Գ.Մկրտչյանի և Ս.Չոբանյանի, ինչպես նաև Վ.Չոբանյանի և Գ.Մկրտչյանի միջև առերես հարցաքննություններ կատարելուց հետո, սակայն դրանք նույնպես չի կատարել, քանի որ 2014 թվականի դեկտեմբերի 8-ին դատախազի որոշմամբ հեռացվել է քրեական գործով վարույթից:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով ներկայացված բացատրությունը, կարծում է, որ Ա.Հովհաննիսյանի, Ս.Չոբանյանի, Վ.Չոբանյանի, Գ.Մկրտչյանի կողմից օգտագործվող հեռախոսահամարներից կատարված ելքային և մուտքային զանգերի վերծանումները ստանալը, տուժող Գ.Մկրտչյանի պարանոցին առկա վնասվածքների առաջացման մեխանիզմի շուրջ փորձագետին հարցաքննելը, ցուցմունքներում առկա էական հակասությունների շուրջ առերես Գ.Մկրտչյանին և Ս.Չոբանյանին, Վ.Չոբանյանին և Ա.Հովհաննիսյանին, Վ.Չոբանյանին և Գ.Մկրտչյանին հարցաքննելը քրեական գործով կատարման ենթակա հրատապ քննչական գործողություններ էին և ուշացումը ողջամտորեն կարող էր հանգեցնել գործի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցի կորստի:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Լ. Կարապետյանի արարքում առկա են խախտման փաստն և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Լ.Կարապետյանի կողմից քրեական գործով դատախազի տրված ցուցումի պահանջները մասամբ չկատարելու դրվագով Լ.Կարապետյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ 8, դեմ 0).
2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

ք. Երևան 03 ապրիլի 2015թ.

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Էդգար Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Շենգավիթ վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Կ.Ադամյանը 2015թ. Մարտի 17-ի ամսաթվով միջնորդություն է ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ Ջ.Ֆարխոյանին միջնորդելով՝ ծառայողական քննություն անցկացնել Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Էդգար Դանիելյանի նկատմամբ:

2015թ. մարտի 17-ին Երևան քաղաքի քննչական վարչության պետ միջնորդությունն ուղարկել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Է. Դանիելյանին վերագրվող առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների:

1. **Քննիչը չի պարզել, թե ում միջոցով կամ ինչ կարգով է Ն. Խաչատրյանը «ԱԵԿՍ գրուպ» ՍՊԸ-ից ձեռք բերել Ս.Զաքարյանի աշխատելու վերաբերյալ տեղեկանքը, ինչն օգտագործելով՝ Ն. Խաչատրյանը սպառողական վարկ է ստացել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ից և հափշտակել գումարը:**

Քննիչ Է. Դանիելյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ ծանրաբեռնված լինելով այլ քրեական գործերի քննությամբ, չի կարողացել պարզել դատախազի ցուցումի մեջ նշված վերը շարադրված պահանջը:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ դատախազի օրինական ցուցումին հաջորդող ավելի քան երեք ամիսների ընթացքում քննիչը չի պարզել կեղծ տեղեկանքը ձեռք բերելու հանգամանքը, /ստանալ տեղեկանքի վրա առկա կնիքի և ստորագրության փորձանմուշներ, նշանակել դատաձեռագրաբանական-դատահետքաբանական համալիր փորձաքննություն, կատարել անհետաձգելի քննչական ու այլ դատավարական գործողություններ/, ուստի և՝ չի բացահայտվել նշված դեպքը, հանցավորի գործողություններին իրավական գնահատական չի տվել:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2. **Ն.Խաչատրյանին հայտնաբերելու, Ս.Զաքարյանի անձնագիրը և սոցիալական քարտը նրա մոտ հայտնվելու հանգամանքները պարզելու ուղղությամբ հանձնարարություններ չի տվել հետաքննության մարմնին:**

Քննիչ Է.Դանիելյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ 2014թ. դեկտեմբերի 24-ի ամսաթվով բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանի ստորագրությամբ պատրաստել է հանձնարարությունը, սակայն անհասկանալի պատճառներով առաջին օրինակը չի ուղարկել ոստիկանության բաժին, չնայած՝ երկրորդ օրինակը կցել է գործին: Հիշյալ հանգամանքն ի հայտ է եկել, երբ քրեական գործով վարույթի կասեցման օրինականությունը ստուգելու համար գործը գտնվել է վարչական շրջանի դատախազությունում: Գրության առաջին օրինակը ոստիկանության բաժին չուղարկելը պատահականություն է եղել:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը նման փաստաթուղթ կազմել և երկրորդ օրինակը կցել է քրեական գործին, սակայն ըստ էության գործով անհրաժեշտ ոչ բոլոր հարցադրումներն են նշվել: Հետաքննության մարմնին հանձնարարություն տալու վերաբերյալ դատախազի օրինական ցուցումը քննիչը կազմել է երկու ամիս անց, այն էլ՝ չի ուղարկել հասցեատիրոջը, որով և ըստ էության չի կատարել դատախազի օրինական ցուցումը, ինչը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի.

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Է. Դանիելյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

3. **Քրեական գործով մի շարք հանգամանքներ պարզելու համար քննիչը չի հարցաքննել Ս. Զաքարյանի ընտանիքի անդամներին:**

Քննիչ Է.Դանիելյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ Ս. Զաքարյանին և նրա մորը հեռախոսով հրավիրել է հարցաքննության, սակայն նրանք գտնվել են անկողնային վիճակում: Դրա վերաբերյալ, սակայն, փաստաթուղթ չի կազմել և չի կցել քրեական գործին:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ դատախազի օրինական ցուցումին հաջորդող երեք ամիսների ընթացքում քննիչը չի կարողացել կատարել ցուցումի պահանջը՝ նրանց անկողնային հիվանդ լինելու պատճառաբանությամբ: Քիչ հավանական է, որ երեք ամիս շարունակ նրանք գտնվել են անկողնային վիճակում, և ի վիճակի չեն եղել հարցաքննվել: Հիշյալ հանգամանքը որևէ կերպ բժշկական փաստաթղթերով չի հիմնավորվել: Բացի այդ, նա չի հարցաքննել նաև Ս.Զաքարյանի ամուսնուն, որդիներին և դստերը:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. **Քննիչը չի պահանջել և չի ստացել Ն. Խաչատրյանի և Ս.Զաքարյանի վերաբերյալ դատվածության տեղեկանքները:**

Քննիչ Է.Դանիելյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ ծանրաբեռնված լինելով այլ քրեական գործերով չի կարողացել ստուգել Ն. Խաչատրյանի և Ս.Զաքարյանի դատվածությունը:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը երեք ամիսների ընթացքում չի չի պահանջել և չի ստացել Ն.Խաչատրյանի և Ս.Զաքարյանի վերաբերյալ դատվածության տեղեկանքները, այն դեպքում, երբ ՀՀ ոստիկանության համացանցի միջոցով հնարավոր է սեղմ ժամկետում ձեռք բերել այդպիսիք:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կեղծ տեղեկանք ձեռք բերելու հանգամանքները չպարզելու դրվագով ավագ քննիչ Է. Դանիելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):
2. Ն. Խաչատրյանին հայտնաբերելու, Ս.Զաքարյանի անձնագիրը և սոցիալական քարտը նրա մոտ հայտնվելու հանգամանքները պարզելու ուղղությամբ հետաքննության մարմնին հանձնարարություններ չտալու դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):
3. Քրեական գործով մի շարք հանգամանքներ պարզելու համար Ս.Զաքարյանի ընտանիքի անդամներին չհարցաքննել դրվագով ավագ քննիչ Է.Դանիելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):
4. Ն.Խաչատրյանի և Ս.Զաքարյանի դատվածությունը չստուգելու դրվագով ավագ քննիչ Է. Դանիելյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը(8 կողմ, 0 դեմ):
5. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

3 ապրիլի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Արթուր Սարուխանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Ա.Սարուխանյանին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ Հ.Գրիգորյանի՝ ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ Արթուր Սարուխանյանի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է հետևյալը.

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցները 04.03.2015թ. Ստեփանակերտ քաղաքի բնակիչ՝ տաքսու վարորդ Անուշավան Մկրտումյանի մոտ հայտնաբերել և ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժին են ուղարկել նշված բաժնի քննիչ Արթուր Սարուխանյանի N 618 ծառայողական վկայականը:

Համաձայն ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության պետի 18.03.2015թ. գրության, տաքսու վարորդ՝ Անուշավան Մկրտումյանին պատկանող «Օպել» մակնիշի ավտոմեքենան ՃԵԿ խախտման համար տեղափոխվել է ԼՂՀ ավտոճանապարհային ոստիկանության տուգանային հրապարակ: Մեքենայի զննման ընթացքում ոստիկանները հայտնաբերել են Արթուր Սարուխանյանի N 618 ծառայողական վկայականը և այդ մասին տեղեկացրել Ստեփանակերտի ռազմական ոստիկանության բաժին: Այնուհետև Ա.Մկրտումյանը ՌՈ աշխատակիցներին է ներկայացրել հիշյալ ծառայողական վկայականը և հայտնել, որ այն իր մոտ է գտնվում դեռևս 2014 թվականի դեկտեմբերից՝ Արթուր Սարուխանյանին պարբերաբար տաքսի ծառայություններ մատուցելու հետևանքով առաջացած 117.000 ՀՀ դրամ պարտքի պատճառով:

Վերը նշված խախտման վերաբերյալ քննիչ Ա.Սարուխանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ տաքսու վարորդ Ա. Մկրտումյանին ճանաչում է վաղուց և անձնական ավտոմեքենա չունենալու պատճառով հաճախ օգտվել է նրա ծառայություններից, որի հետևանքով առաջացել է 117.000 ՀՀ դրամի չափով պարտք, սակայն իր ծառայողական վկայականը ոչ թե պարտքի դիմաց է հանձնել Անուշավան Մկրտումյանին, այլ 2015թ. փետրվարին այն մոռացել է վերջինիս տաքսի ավտոմեքենայի մեջ, որը 4-5 օր անց հայտնաբերվել է ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից:

Արթուր Սարուխանյանը հայտնեց նաև, որ նշված 4-5 օրերի ընթացքում գործնականում որևէ միջոց չի ձեռնարկել ծառայողական վկայականը տաքսու վարորդից ետ վերցնելու ուղղությամբ, վկայականի կորստյան մասին ղեկավարությանը չի զեկուցել:

Կարգապահական հանձնաժողովը ապացուցված չի համարել Ա.Սարուխանյանի կողմից ծառայողական վկայականը շահադիտական կամ անձնական բնույթի այլ նպատակների համար Ա.Մկրտումյանին հանձնելու հանգամանքը, գտավ, որ նշված խախտման դրվագով Ա.Սարուխանյանի արարքում բացակայում է խախտման փաստի առկայությունը:

Միաժամանակ հանձնաժողովը գտավ, որ Արթուր Սարուխանյանը խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 08.09.2014թ. թիվ 4-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի անձնական կնիքների նմուշները և ծառայողական միասնական վկայականի նկարագրման ու տրամադրման կարգի 4-րդ կետի պահանջները և որոշեց, որ ծառայողական վկայականը կորցնելու դրվագով Ա.Սարուխանյանի արարքում առկա են կարգապահական խախտման փաստն ու նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ծառայողական վկայականը շահադիտական կամ անձնական բնույթի այլ նպատակների համար Ա.Մկրտումյանին հանձնելու դրվագով Ա.Սարուխանյանի արարքում բացակայում է խախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 2):
2. Ծառայողական վկայականը կորցնելու դրվագով Ա.Սարուխանյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 2):
3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

3 ապրիլի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ռևիկ Սեդրակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շիրակի մարզի դատախազ Ր.Ասլանյանի 16.02.2015 և 27.02.2015թթ. միջնորդությունների առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Շիրակի մարզային քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Սեդրակյանը, վարույթում

քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 112 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուց-ված քրեական գործերի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ռ.Սեդրակյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննիչ Ռ.Սեդրակյանը պարտավոր լինելով քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն երեք օր առաջ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշում ներկայացնել քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, դատավարական ժամկետների խախտմամբ՝ նախաքննության ժամկետը լրանալուց մեկ օր առաջ է նման որոշում կայացրել, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ քր.դատ.օր-ի 197-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված իմպերատիվ պահանջը:

Վերը նշված խախտման վերաբերյալ Ռ.Սեդրակյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ թիվ 68159814 քրեական գործը հարուցվել է 08.12.2014թ.-ին: Հաջորդ օրը որոշում է կայացրել նշված քրեական գործը վարույթ ընդունելու մասին և ձեռնամուխ եղել նախաքննության կատարմանը: Քրեական գործով կատարելով անհրաժեշտ բոլոր քննչական և դատավարական գործողությունները և համարելով, որ կատարված նախաքննությամբ ձեռք է բերվել բավարար ապացույցների համակցություն Տ. Կիրակոսյանին գործով որպես մեղադրյալ ներգրավելու համար, 06.02.2015թ. որոշում է կայացրել նրան ՀՀ քր.օր-ի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և հաշվի առնելով, որ նա թաքնվել է քննությունից, նրա նկատմամբ հայտարարել է հետախուզում և որպես խափանման միջոց ընտրել ստորագրություն չհեռանալու մասին: 07.02.2015թ. ոստիկանության Կումայրիի բաժնից հաղորդում ստանալով, որ հայտնաբերվել և քննության է ներկայացվում Յ.Կարապետյանին պատկանող «Վազ-2108» մակնիշի 35 PO 606 հաշվառման համարանիշի ավտոմեքենան և ավտոմեքենայի գնորդ Ա. Բաղդասարյանը, այդ մասին զեկուցել է վերադասին: Նույն օրը Ա.Բաղդասարյանը հարցաքննվելով դեպքի հանգամանքների շուրջ տվել է ցուցմունքներ, որից հետո անհրաժեշտություն է առաջացել շարունակել նախաքննությունը, ինչը և կատարել է 2015թ. փետրվարի 7-ին և 8-ին, մասնավորապես, զննել է ավտոմեքենան, նշանակել է դատաապրանքագիտական փորձաքննություն, հարցաքննել մի շարք վկաների: Իր, իսկ այնուհետև քննչական վարչության պետի տեղակալ Ե.Հակոբյանի կողմից վերը նշված հանգամանքները քննարկվել են հսկող դատախազ Ս.Ասլանյանի հետ, միաժամանակ նրան տեղյակ պահելով, թվարկված գործողությունները կատարելուց հետո, քրեական գործով վարույթը 09.02.2015թ., այսինքն՝ ժամկետի վերջին ոչ աշխատանքային օրվան հաջորդող օրը կասեցնելու մասին: Դատախազ Ս.Ասլանյանը բանավոր ցուցում է տվել քրեական գործով վարույթը չկասեցնել և 2015թ. փետրվարի 7-ին որոշում կայացնել նախաքննության ժամկետը երկու ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, ինչը և կատարվել է իր կողմից:

Շիրակի մարզային քննչական վարչության պետ Ս.Սիմոնյանը բացատրություն է տվել այն մասին, որ 2015թ. փետրվարի 2-ին քրեական գործը քննարկվել է իր հետ, որի արդյունքում որոշվել է անհրաժեշտ բոլոր գործողությունները կատարելուց հետո՝ Տ. Կիրակոսյանին չհայտնաբերելու դեպքում, քրեական գործով վարույթը նախաքննության ժամկետի ավարտին կասեցնել, մինչև մեղադրյալի հայտնաբերվելը: 2015թ. փետրվարի 7-ին ոստիկանության Կումայրիի բաժնից հաղորդում է ստացվել, որ հայտնաբերվել և քննության է ներկայացվում Յ.Կարապետյանին պատկանող ՎԱԶ 2108 մակնիշի ավտոմեքենան և ավտոմեքենայի գնորդ Ա.Բաղդասարյանը: Նշված հանգամանքը քննիչը զեկուցել է վարչության պետի տեղակալ Ե.Հակոբյանին, իսկ վերջինս էլ՝ իրեն: Իր կողմից ցուցում է տրվել հարցաքննել Ա.Բաղդասարյանին, զննել ավտոմեքենան, նշանակել ապրանքագիտական փորձաքննություն և գործով վարույթը կասեցնել 08.02.2015թ.: Իր հանձնարարությամբ քննիչ Ռ.Սեդրակյանի, իսկ այնուհետև իր տեղակալ Ե.Հակոբյանի կողմից վերը նշված հանգամանքները քննարկվել են հսկող դատախազ Ս.Ասլանյանի հետ, միաժամանակ նրան տեղյակ պահելով, վերը թվարկված գործողությունները կատարելուց հետո, քրեական գործով վարույթը 09.02.2015թ., այսինքն՝ ժամկետի վերջին ոչ աշխատանքային օրվան հաջորդող օրը կասեցնելու՝ վարույթն իրականացնող մարմնի դիրքորոշման մասին: Հսկող դատախազ Ս.Ասլանյանը քննիչին բանավոր ցուցում է տվել քրեական գործով վարույթը չկասեցնել և 07.02.2015թ. որոշում կայացնել նախաքննության ժամկետը երկու ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին և երբ նրան բացատրվել է, որ ցուցումը կատարելու դեպքում դատավարական ժամկետները կխախտվեն, դատախազ Ս.Ասլանյանը պնդել է իրենը, ասելով, որ ՀՀ քր. դատ. օր-ի 193-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն 24 ժամվա ընթացքում իր կողմից տրված բանավոր ցուցումը կձևակերպի գրավոր ցուցումի և կուղարկի քննչական վարչություն: Այդ պայմաններում դատախազի ցուցումը ենթակա էր պարտադիր կատարման և դրա բողոքարկումը չէր կասեցնելու ցուցումի կատարումը, հետևաբար, քննիչի կողմից դատախազի ցուցումի համաձայն կայացվել է հիշյալ որոշումը և 09.02.2015թ. քրեական գործի հետ միասին ուղարկվել դատախազություն: Մինչ օրս դատախազի կողմից տրված բանավոր ցուցումը գրավորի չի վերածևակերպվել, որի կապակցությամբ իր կողմից մարզի դատախազին ուղարկվել է գրավոր առարկություն: Դատախազի կողմից իր բանավոր ցուցումը 24 ժամվա ընթացքում գրավոր ցուցումի չձևակերպելը քրեական վարույթն իրականացնող մարմնին կանգնեցրել է փաստի առաջ:

Ս.Սիմոնյանը նշել է նաև, որ երբ մարզի դատախազությունից ստացել է ծառայողական քննություն անցկացնելու մասին դատախազի միջնորդության պատճենը, զանգահարել է հսկող դատախազ Ս.Ասլանյանին և նրանից պահանջել պարզաբանումներ, թե ինչու է իրենց ցուցումով կատարված գործողության համար մարզի դատախազը նման միջնորդություն հարուցել: Վերջինս իրեն պատասխանել է, որ ինքը մարզի դատախազին զեկուցել է, որ այդ որոշումը կայացվել է իր բանավոր ցուցումով, բայց դատախազն այդ կերպ է որոշել, հաշվի չառնելով իր ներկայացրած հանգամանքները, ըստ էության փաստի առաջ կանգնեցնելով նաև դատավարական ղեկավարումն իրականացնող դատախազին:

Կարգապահական հանձնաժողովը հսկող դատախազի դիրքորոշումը պարզելու նպատակով 27.03.2015թ. որոշում է կայացրել առաջարկել Շիրակի մարզի դատախազության դատախազ Ս. Ասլանյանին՝ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Ռևիկ Սեդրակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով

վերոնշյալ հանգամանքների վերաբերյալ կարգապահական հանձնաժողովին ներկայացնել գրավոր կամ բանավոր դիրքորոշում:

Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Ս.Ասլանյանի՝ կարգապահական հանձնաժողովին հասցեագրված 31.03.2015թ. գրության համաձայն՝ ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջի կոպիտ խախտմամբ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշում ներկայացնելու բանավոր ցուցում իր կողմից երբևէ չի տրվել, առավել ևս՝ չի խոստացել այն հետագայում ձևակերպել գրավոր կերպով և նման ցուցումն օրինական չէր կարող լինել, կարծում է, որ, քննիչ Ռ.Սեդրակյանը պարտավոր լինելով քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն երեք օր առաջ նախաքննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշում ներկայացնել քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, դատավարական ժամկետների խախտմամբ՝ նախաքննության ժամկետը լրանալուց մեկ օր առաջ է նման որոշում կայացրել, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ քր.դատ.օր-ի 197-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված իմպերատիվ պահանջը:

Կարգապահական վարույթի ընթացքում հիմնավորվեց, որ քննիչը նախաքննության ժամկետը լրանալուց մեկ օր առաջ է նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն ներկայացրել հսկող դատախազին, որի արդյունքում խախտվել է ՀՀ քր.դատ.օր-ի 197-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված պահանջը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Ռ.Սեդրակյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը:

2. **Ավագ քննիչ Ռ.Սեդրակյանը 24.02.2015թ. Շիրակի մարզի դատախազություն է ուղարկել ՀՀ քր.օր-ի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քննվող թիվ 68201014 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշումը, որի նկարագրական մասում շարադրված են եղել նույն քննիչի վարույթում քննվող մեկ այլ՝ թիվ 68159814 քրեական գործի փաստական հանգամանքները և միայն դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի բանավոր զգուշացումից հետո է քննիչը կազմվել պատշաճ դատավարական փաստաթուղթ, որն ուղեկցական գրությամբ հաջորդ օրը ստացվել է մարզի դատախազություն:**

Վերը նշված խախտման վերաբերյալ Ռ.Սեդրակյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ 2015 թվականի փետրվարի 27-ին լրանալիս է եղել թիվ 68201014 քրեական գործի նախաքննության ժամկետը: 2015 թ. փետրվարի 24-ին որոշում է կայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, որի ընթացքում դրսևորելով շտապողականություն՝ համակարգչի միջոցով որոշումը տպագրելու ժամանակ թույլ է տվել տեխնիկական վրիպակ՝ կայացված որոշման նկարագրական մասում նշելով թիվ 68159814 քրեական գործի դեպքի փաստական հանագամանքները, որից հետո կից գրությամբ այն ուղարկել է Շիրակի մարզի դատախազություն: Այնուհետև աշխատասենյակում՝ համակարգչի մոնիտորին նկատելով նշված վրիպակը, անմիջապես զեկուցել է վարչության պետ Ս.Սիմոնյանին: Վերջինս հեռախոսազրույց է ունեցել դատավարական հսկողություն իրականացնող դատախազ Ս.Ասլանյանի հետ, հայտնել է նրան վրիպակի մասին, ասելով որ նույն պահին իրենց է ուղարկվում որոշման ճշտված տարբերակը: Նույն օրը՝ 24.02.2015 թվականին վերոհիշյալ որոշման ուղղված տարբերակը ուղարկվել է ՇՄ դատախազություն:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով ներկայացված բացատրությունը կարծում է, որ ավագ քննիչ Ռ.Սեդրակյանը թիվ 68201014 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու որոշման նկարագրական մասում թույլ է տվել տեխնիկական վրիպակ՝ նշելով թիվ 68159814 քրեական գործի փաստական հանգամանքները, որը քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում չի համարվում, քանի որ նույն օրը հայտնաբերելով իր կողմից թույլ տրված տեխնիկական վրիպակն՝ անմիջապես ուղղված որոշման օրինակը կից գրությամբ ուղարկել է Շիրակի մարզի դատախազություն:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Ռ.Սեդրակյանի արարքում բացակայում է խախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ռ.Սեդրակյանի կողմից դատավարական ժամկետների խախտմամբ՝ նախաքննության ժամկետը լրանալուց մեկ օր առաջ նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշում կայացնելու դրվագով Ռ.Սեդրակյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 8, դեմ՝ 0):
2. Ռ.Սեդրակյանի կողմից քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու որոշման նկարագրական մասում տեխնիկական վրիպակ թույլ տալու դրվագով Ռ.Սեդրակյանի արարքում բացակայում է խախտման փաստը (կողմ՝ 8, դեմ՝ 0):
3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:
4.

Ո Ր Ո Շ Ու Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

11 ապրիլի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Աշոտ Մկրտչյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետագոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Տ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ Զ.Ֆարխոյանի 23.02.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ նույն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Աշոտ Մկրտչյանը, վարույթում քննված՝ 10 քրեական գործով նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Մկրտչյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. **Անհայտ անձի կողմից Օ.Փափազյանի դրամապանակը հափշտակելու դեպքի առթիվ 21.01.2015թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված թիվ 13106515 քրեական գործով առ 23.02.2015թ. դրությամբ չի կատարել քննչական բաժնի պետի տեղակալի առարկայական ցուցումի պահանջները՝ տուժողի մասնակցությամբ չի զննել դեպքի վայրը, չի հստակեցրել տուժողից հափշտակված իրերի արժեքը:**

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Մկրտչյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ծանրաբեռնվածությունից ելնելով բաժնի պետի տեղակալի ցուցումները կատարել է ուշացումով:

Վերը նշված դրվագով կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Մկրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչը սահմանված կարգով չի բողոքարկել և չի կատարել բաժնի պետի տեղակալի կատարման համար պարտադիր առարկայական ցուցումի պահանջները, խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Տուժողի մասնակցությամբ դեպքի վայրը զննելը, տուժողից հափշտակված իրերի արժեքը հստակեցնելը քրեական գործով կատարման ենթակա հրատապ քննչական գործողություններ էին և ուշացումը ողջամտորեն կարող էր հանգեցնել գործի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցի կորստի:

2. **Անհայտ անձի կողմից «Օպտիկ Սթայլ» խանութ սրահից Ի.Քամալյանի բջջային հեռախոսը հափշտակելու դեպքի առթիվ 23.01.2015թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 13107215 քրեական գործով չի կատարել քննչական բաժնի պետի տեղակալի 17.02.2014թ. առարկայական ցուցումի պահանջները՝ չի զննել դեպքի վայրը, ինչպես նաև՝ «Օպտիկ Սթայլ» խանութ սրահի անվտանգության համակարգի տեսաձայնագրությունը, որտեղ հստակ պատկերված է հափշտակության դեպքը:**

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Մկրտչյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ դատավարական խախտումները պայմանավորված են եղել իր ծանրաբեռնվածությամբ ե ընթերակաների բացակայությամբ:

Վերը նշված դրվագով կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Մկրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչը սահմանված կարգով չի բողոքարկել և չի կատարել բաժնի պետի տեղակալի կատարման համար պարտադիր առարկայական ցուցումի պահանջները, խախտելով «քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: Դեպքի վայրը և «Օպտիկ Սթայլ» խանութ սրահի անվտանգության համակարգի տեսաձայնագրությունը զննելը, քրեական գործով կատարման ենթակա հրատապ քննչական գործողություններ էին և ուշացումը ողջամտորեն կարող էր հանգեցնել գործի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցի կորստի:

3. **15.01.2015թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 13104415 քրեական գործով չի հարցաքննել դեպքի վայրին հարակից շենքերի բնակիչներին, ավտոլվացման կետի աշխատակիցներին, ովքեր կարող էին քննությանը հետաքրքրող տեղեկություններ տրամադրել:**

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Մկրտչյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ քրեական գործը իր վարույթում քննվել է 34 օր և կատարել է պատշաճ նախաքննություն:

Վերը նշված դրվագով կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Ս"կրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քրեական գործով քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում չի կատարել դրանք, ինչը հրատապ էր և չկատարելը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի՛ այսինքն խախտվել են « քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

4. **ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով 02.02.2015թ. հարուցված թիվ 13109315 քրեական գործով չի զննել «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ից ստացված անվտանգության համակարգի տեսագրությունը, չի հարցաքննել տուժողի ներկայացուցիչ Գ.Ստեփանյանին, ինչպես նաև բանկի անվտանգության աշխատակիցներին:**

Հիշ|ւսլ իրավախախտման վերաբերյալ Ա.Մկրտչյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ծանրաբեռնվածությամբ պայմանավորված չի զննել տեսագրությունը, բացի այդ, քրեական գործն իր վարույթում քննվել է 17 օր և կատարել է պատշաճ նախաքննություն:

Վերը նշված դրվագով կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա.Մկրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քրեական գործով քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում չի կատարել դրանք, ինչը հրատապ էր, և չկատարելը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի՝ այսինքն խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

5. **Անհայտ անձանց կողմից կեղծ փողեր պատրաստելու և իրացնելու դեպքերի առթիվ հարուցված 6 քրեական գործով քննչական բաժնի պետի տեղակալ Է.Աղայանի 03.02.2015թ. և 17.02.2015թ. առարկայական ցուցումների պահանջները առ 23.02.2015թ. դրությամբ չի կատարել՝ կեղծ թղթադրամների և մետաղադրամների հայտնաբերման վերաբերյալ կազմված ակտերում նշված բանկերի բոլոր աշխատակիցներին չի հարցաքննել և դրանց հիման վրա հետաքննության մարմնին առարկայական հանձնարարություններ չի տվել:**

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Մկրտչյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ բաժնի պետի տեղակալի ցուցումները կատարել է ուշացումով, քանի որ ծանրաբեռնվածության պատճառով ֆիզիկապես հնարավորություն չի ունեցել դրանք ժամանակին կատարելու:

Վերը նշված դրվագով կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ քննիչ Ա. Մկրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչը պարբերաբար չի կատարել քննչական բաժնի պետի տեղակալի նույնաբնույթ ցուցումների պահանջները, խախտելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

Տուժողի մասնակցությամբ դեպքի վայրը չզննելու և նրանից հափշտակված իրերի արժեքը չհստակեցնելու դրվագով Ա.Մկրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

1. Դեպքի վայրը, ինչպես նաև՝ «Օպտիկ Սթայլ» խանութ սրահի անվտանգության համակարգի տեսաձայնագրությունը չզննելու դրվագով Ա.Մկրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):
2. Դեպքի վայրին հարակից շենքերի բնակիչներին, ավտոլվացման կետի աշխատակիցներին չհարցաքննելու դրվագով Ա.Մկրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (6կողմ, 0 դեմ):
3. ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ից ստացված անվտանգության համակարգի տեսագրությունը չզննելու, տուժողի ներկայացուցիչ Գ.Ստեփանյանին, ինչպես նաև բանկի անվտանգության աշխատակիցներին չհարցաքննելու դրվագով Ա.Մկրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):
4. Քննչական բաժնի պետի տեղակալի նույնաբնույթ ցուցումների պահանջները պարբերաբար չկատարելու դրվագով Ա.Մկրտչյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (6 կողմ, 0դեմ):
5. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

11 ապրիլի 2014 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Արթուր Սարուխանյանի նկատմամբ «կոչումի

իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը, նկատի ունենալով, որ թեև քննիչ Արթուր Սարուխանյանի կողմից ծառայողական վկայականը կորցնելն ինքնին չի դասվում այնպիսի կարգապահական խախտումների շարքին, որի համար նպատակահարմար է կիրառել կարգապահական տույժի խիստ տեսակ, սակայն հաշվի առնելով, որ Արթուր Սարուխանյանը ղեկավարության կողմից բնութագրվում է բացասական և ծառայողական քննության ընթացքում վերջինիս կողմից դրսևորած՝ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողին ոչ վայել վարքագիծը, ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2014թ. նոյեմբերի 17-ի թիվ 12Ա հրամանով սահմանված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 77-րդ և 81-րդ կետերով՝

ԵԶՐԱԿԱՑՐԵՑ

1. ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնի քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Արթուր Սարուխանյանի նկատմամբ «կոչումի իջեցում՝ մեկ աստիճանով» կարգապահական տույժի կիրառումը տվյալ իրավիճակում համարել նպատակահարմար (կողմ՝ 5, դեմ՝ 1):

2. Սույն եզրակացության օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման բացակայության մասին

8 մայիսի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի ավագ քննիչ Արթուր Այվազյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Տ

Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Գ.Գևորգյանի 11.04.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի ավագ քննիչ Արթուր Այվազյանը, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Այվազյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումը ըստ ստորև նշված դրվագի.

Քննիչ Ա.Այվազյանը իր վարույթում քննվող թիվ 68119314 քրեական գործի նյութերով 15.03.2015թ. որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով թիվ 68102315 քրեական գործը հարուցելու և այն առանձին վարութում առանձնացնելու մասին, սակայն՝ նույն կամ առանձին որոշմամբ այն վարույթ չի ընդունել՝ չեն պահպանվել ՀՀ քր. դատ. օր.-ի 184-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ուստի ՀՀ քր.դատ. օր.-ի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով տվյալ դատավարական գործողությունները կատարելու համար լիազորված սուբյեկտ չի հանդիսացել, ուստի նրա կողմից քննչական գործողություններ կատարելու եղանակով ձեռք բերված ապացույցները չեն կարող թույլատրելի ճանաչվել՝ համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից ձեռք բերելու հիմքով, ինչը քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված խախտման վերաբերյալ Ա.Այվազյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ 15.03.2015թ. որոշում է կայացրել թիվ 68119314 քրեական գործի նյութերով նոր՝ թիվ 68102315 քրեական գործը հարուցելու, այն առանձին վարույթում առանձնացնելու և նախաքննություն կատարելու մասին և հաջորդ օրը որոշման օրինակն օրենքով սահմանված կարգով ուղարկել է Շիրակի մարզի դատախազություն: 2015 թվականի մարտի 15-ից մարտի 29-ն ընկած ժամանակահատվածում ձեռնամուխ է եղել քրեական գործով նախաքննության կատարմանը, մասնավորապես՝ հարցաքննել է վկաներ Գայանե և Արմենուհի Պետրոսյաններին, Կ.Կարապետյանին, Հասմիկ և Կարինե Խոսրովյաններին: 31.03.2015թ. դատավարական ղեկավարում իրականացնող դատախազ Գ.Գևորգյանի գրավոր պահանջով քրեական գործը ներկայացրել է դատախազություն, որտեղից 03.04.2015թ. Շիրակի մարզային քննչական վարչություն է վերադարձվել դատախազի կողմից տրված ցուցումով: Թիվ 68119314 քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու, այն առանձին վարույթում առանձնացնելու մասին որոշման մեջ հստակ նշել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածները՝ 27-րդ, 55-րդ, 175-176-րդ, 182-րդ, 184-րդ և 192-րդ, որոնցով ղեկավարվելով կայացրել է որոշումը, և իր վարույթում գտնվող քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելիս և համապատասխան հոդվածների պահանջներով ղեկավարվելիս, հետևում է, որ այն ընդունվել է վարույթ, քանի որ որոշման մեջ չեն առանձնացվել հիշյալ հոդվածների կոնկրետ որևէ մասի կամ կետի պահանջներով ղեկավարվելու հանգամանքը, ուստի կայացված որոշումից հետևում է, որ իր վարույթում քննվող թիվ 68119314 քրեական գործի նյութերով թիվ 68102315 քրեական գործը հարուցելիս, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության համապատասխան հոդվածների պահանջներով, այն առանձնացրել է իր վարույթում և ոչ թե այլ քննիչի, ինչպես նաև միաժամանակ հետևում է, որ վարույթ է ընդունել, ուստի քրեական գործը հարուցելուց հետո կատարած բոլոր քննչական գործողությունները և դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցները ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով: Ավելին, հիշյալ որոշումը ՀՀ քր. դատ. օր-ի 192-րդ հոդվածի պահանջով 16.03.2015թ. հանձնվել է Շիրակի մարզի դատախազություն: Եթե հիշյալ որոշումը կայացվել է օրենքի պահանջի խախտմամբ, ապա ինչու հսկող դատախազը դրան չի անդրադարձել անմիջապես, այլ դրա օրինականության հարցը վիճարկել է որոշումը կայացնելուց 16 օր անց: Նշել է նաև, որ դատախազի կողմից տրված ցուցումները ենթակա են պարտադիր կատարման, ուստի իր կողմից կատարվել են ցուցումի պահանջները, սակայն նշված ցուցումի դեմ բողոք է պատրաստել, որը դեռևս չի հանձնել դատախազություն և իր կողմից դատախազի ցուցումում նշված գործողությունները կատարելը դեռ չի նշանակում, որ ինքը համամիտ է դրանց հետ, սակայն չէր կարող չկատարել, քանի որ դատախազի կողմից տրված ցուցումի բողոքարկումը տվյալ դեպքում չի կասեցնում դրա կատարումը:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով ներկայացված բացատրությունը և ուսումնասիրելով նյութերը, հաստատված է համարել հետևյալ հանգամանքները.

1. քննիչ Ա.Այվազյանը 15.03.2015թ. որոշում է կայացրել թիվ 68102315 քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին.

2. թիվ 68102315 քրեական գործը հարուցելու առիթ է հանդիսացել քննիչ Ա. Այվազյանի վարույթում գտնվող մեկ այլ՝ թիվ 68119314 քրեական գործով իր լիազորություններն իրականացնելիս հանցագործության տվյալների հայտնաբերումը.

3. քննիչ Ա. Այվազյանը թիվ 68102315 քրեական գործը հարուցել է հատուկ ռեժիմով, այն է՝ ՀՀ քր. դատ. օր-ի 184-րդ հոդվածով սահմանված քրեական գործի նյութերով նոր գործ հարուցելու կարգով: Քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին որոշում կայացնելիս, քննիչը ղեկավարվել է նաև 184-րդ, և 187-րդ հոդվածներով.

4. քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին 15.03.2015թ. որոշման եզրափակիչ մասում նշված չէ քննիչի կողմից վարույթ ընդունելու կամ նախաքննության ուղարկելու մասին.

5. քննիչ Ա. Այվազյանը թիվ 68102315 քրեական գործով կատարել է մի շարք քննչական և այլ դատավարական գործողություններ.

6. քննիչ Ա. Այվազյանը քրեական գործ հարուցելու և առանձին վարույթ առանձնացնելու մասին որոշումը 24 ժամվա ընթացքում ուղարկել է հսկողություն իրականացնող դատախազին:

ՀՀ քր. դատ. օր-ի 184-րդ հոդվածի1-ին և 2-րդ մասի համաձայն՝ քննիչը իր վարույթում գտնվող քրեական գործի նյութերով կայացնում են որոշում նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին: Որոշման մեջ պետք է նշվեն՝ գործի հարուցման և անջատման հիմքերը, դրվագները և անձինք, քրեական օրենքի այն հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որի հատկանիշներով գործ է հարուցված և անջատված է առանձին վարույթում, անջատված գործը նախաքննության ուղարկելու կամ գործն իր վարույթն ընդունելու մասին որոշումը: Նշված նորմերից բխում է, որ քննիչը իր վարույթում գտնվող քրեական գործի նյութերով նոր գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելուց հետո անջատված գործն ընդունում է վարույթ կամ ուղարկում նախաքննության: Տվյալ դեպքով, թեև թիվ 68102315 քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին 15.03.2015թ. որոշման եզրափակիչ մասում բացակայում է քննիչի կողմից «վարույթ ընդունելու մասին» հիշատակում, սակայն տվյալ քրեական գործով քննիչ Ա. Այվազյանը քրեական գործ հարուցելուց հետո անջատված գործը ոչ թե ուղարկել է նախաքննության, այլ իրավաբանորեն և փաստացիորեն ընդունել է վարույթ, ինչը հիմնավորվում է հետևյալ հանգամանքներով:

Առաջին, քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին 15.03.2015թ. որոշման մեջ քննիչը ղեկավարվել է ՀՀ քր. դատ. օր-ի 187-րդ հոդվածով, որը կարգավորում է քրեական գործ հարուցելուց հետո դրա ընթացքը: Այսպես, նշված հոդվածի համաձայն՝ քրեական գործ հարուցելուց հետո՝ 1) դատախազը նախաքննություն կատարելու համար գործն ուղարկում է քննիչին. 2) քննիչը ձեռնամուխ է լինում գործով նախաքննության կատարմանը՝ այդ մասին անհապաղ տեղյակ պահելով դատախազին. 3) հետաքննության մարմնի պետը հետաքննության մարմնի աշխատակցին հանձնարարում է կատարել քննչական անհետաձգելի գործողություններ կամ դրանք կատարում է անձամբ՝ քրեական գործ հարուցելու մասին անհապաղ տեղյակ պահելով դատախազին: Սույն դեպքով քննիչին վերագրելի են ՀՀ քր. դատ. օր-ի 187-րդ հոդվածի 2-րդ կետը, որը կարգավորում է միայն քրեական գործ հարուցելուց հետո նախաքննության կատարմանը ձեռնամուխ լինելու հարաբերությունները: Եթե քննիչը հարուցում է քրեական գործ և անջատված գործը նախաքննություն կատարելու համար ուղարկում է այլ քննիչի, ապա այդ դեպքում ՀՀ քր. դատ. օր-ի 187-րդ հոդվածը կիրառելի չէ: Սույն գործով, քննիչ Ա. Այվազյանը, քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին 15.03.2015թ. որոշման մեջ ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 187-րդ հոդվածով, ձեռնամուխ է եղել նախաքննության կատարմանը:

Երկրորդ, քննիչ Ա. Այվազյանը, քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին 15.03.2015թ. որոշում կայացնելուց հետո տվյալ քրեական գործով կատարել է մի շարք քննչական և այլ դատավարական գործողություններ:

Երրորդ, հսկողություն իրականցնող դատախազը, ստանալով քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին 15.03.2015թ. որոշումը, ՀՀ քր. դատ. օր-ի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով 7-օրյա ժամկետում չվերացնելով քրեական գործ հարուցելու մասին որոշումը, հաստատել է դրա օրինականությունը և քննիչ Ա. Այվազյանի՝ որպես նախաքննություն կատարող սուբյեկտի պատշաճությունը: Բանն այն է, որ եթե քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին 15.03.2015թ. որոշման եզրափակիչ մասում վարույթ ընդունելու կամ նախաքննություն ուղարկելու մասին գրառման բացակայությունը դատախազի կողմից գնահատվեր որպես ՀՀ քր. դատ. օր-ի 184-րդ հոդվածի խախտում կամ ոչ պատշաճ քննիչի կողմից նախաքննության կատարում, ապա այդ որոշումը հսկող դատախազի կողմից պետք է վերացվեր:

Վերը նշված հանգամանքների առկայության պայմաններում քրեական գործ հարուցելու և այն առանձին վարույթում առանձնացնելու մասին 15.03.2015թ. որոշման եզրափակիչ մասում վարույթ ընդունելու կամ նախաքննության ուղարկելու մասին հիշատակման բացակայությունը «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով չի հանդիսանում օրենքի կոպիտ խախտում:Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Ա.Այվազյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քննիչի կողմից թիվ 68119314 քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու, այն առանձին վարութում առանձնացնելու որոշման եզրափակիչ մասում վարույթ ընդունելու մասին նշում չկատարելու դրվագով Ա.Այվազյանի արարքում բացակայում է խախտման փաստ (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

8 մայիսի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի ավագ քննիչ Արթուր Այվազյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Գ.Գևորգյանի 11.04.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի ավագ քննիչ Արթուր Այվազյանը, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա.Այվազյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումը ըստ ստորև նշված դրվագի.

Քննիչ Ա.Այվազյանը իր վարույթում քննվող թիվ 68119314 քրեական գործի նյութերով 15.03.2015թ. որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով թիվ 68102315 քրեական գործը հարուցելու և այն առանձին վարութում առանձնացնելու մասին, սակայն՝ նույն կամ առանձին որոշմամբ այն վարույթ չի ընդունել՝ չեն պահպանվել ՀՀ քր. դատ. օր.-ի 184-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ուստի ՀՀ քր.դատ. օր.-ի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով տվյալ դատավարական գործողությունները կատարելու համար լիազորված սուբյեկտ չի հանդիսացել, ուստի նրա կողմից քննչական գործողություններ կատարելու եղանակով ձեռք բերված ապացույցները չեն կարող թույլատրելի ճանաչվել՝ համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից ձեռք բերելու հիմքով, ինչը քրեադատավարական օրենքի էական խախտում է:

Վերը նշված խախտման վերաբերյալ Ա.Այվազյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ 15.03.2015թ. որոշում է կայացրել թիվ 68119314 քրեական գործի նյութերով նոր՝ թիվ 68102315 քրեական գործը հարուցելու, այն առանձին վարույթում առանձնացնելու և նախաքննություն կատարելու մասին և հաջորդ օրը որոշման օրինակն օրենքով սահմանված կարգով ուղակել է Շիրակի մարզի դատախազություն: 2015 թվականի մարտի 15-ից մարտի 29-ն ընկած ժամանակահատվածում ձեռնամուխ է եղել քրեական գործով նախաքննության կատարմանը, մասնավորապես՝ հարցաքննել է վկաներ Գայանե և Արմենուհի Պետրոսյաններին, Կ.Կարապետյանին, Հասմիկ և Կարինե Խոսրովյաններին: 31.03.2015թ. դատավարական ղեկավարում իրականացնող դատախազ Գ.Գևորգյանի գրավոր պահանջով քրեական գործը ներկայացրել է դատախազություն, որտեղից 03.04.2015թ. Շիրակի մարզային քննչական վարչություն է վերադարձվել դատախազի կողմից տրված ցուցումով: Թիվ 68119314 քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու, այն առանձին վարույթում առանձնացնելու մասին որոշման մեջ հստակ նշել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածները՝ 27-րդ, 55-րդ, 175-176-րդ, 182-րդ, 184-րդ և 192-րդ, որոնցով ղեկավարվելով կայացրել է որոշումը, և իր վարույթում գտնվող քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելիս և համապատասխան հոդվածների պահանջներով ղեկավարվելիս, հետևում է, որ այն ընդունվել է վարույթ, քանի որ որոշման մեջ չեն առանձնացվել հիշյալ հոդվածների կոնկրետ որևէ մասի կամ կետի պահանջներով ղեկավարվելու հանգամանքը, ուստի կայացված որոշումից հետևում է, որ իր վարույթում քննվող թիվ 68119314 քրեական գործի նյութերով թիվ 68102315 քրեական գործը հարուցելիս, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության համապատասխան հոդվածների պահանջներով, այն առանձնացրել է իր վարույթում և ոչ թե այլ քննիչի, ինչպես նաև միաժամանակ հետևում է, որ վարույթ է ընդունել, ուստի քրեական գործը հարուցելուց հետո կատարած բոլոր քննչական գործողությունները և դրանց արդյունքում ձեռք բերված ապացույցները ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով: Ավելին, հիշյալ որոշումը ՀՀ քր. դատ. օր-ի 192-րդ հոդվածի պահանջով 16.03.2015թ. հանձնվել է Շիրակի մարզի դատախազություն: Եթե հիշյալ որոշումը կայացվել է օրենքի պահանջի խախտմամբ, ապա ինչու հսկող դատախազը դրան չի անդրադարձել անմիջապես, այլ դրա օրինականության հարցը վիճարկել է որոշումը կայացնելուց 16 օր անց: Նշել է նաև, որ դատախազի կողմից տրված ցուցումները ենթակա են պարտադիր կատարման, ուստի իր կողմից կատարվել են ցուցումի պահանջները, սակայն նշված ցուցումի դեմ բողոք է պատրաստել, որը դեռևս չի հանձնել դատախազություն և իր կողմից դատախազի ցուցումում նշված գործողությունները կատարելը դեռ չի նշանակում, որ ինքը համամիտ է դրանց հետ, սակայն չէր կարող չկատարել, քանի որ դատախազի կողմից տրված ցուցումի բողոքարկումը տվյալ դեպքում չի կասեցնում դրա կատարումը:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով ներկայացված բացատրությունը, կարծում է, որ նշված դրվագով ավագ քննիչ Ա.Այվազյանը թույլ է տվել քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում, այն է՝ թիվ 68119314 քրեական գործի նյութերով 15.03.2015թ. որոշում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով թիվ 68102315 քրեական գործը հարուցելու և այն առանձին վարութում առանձնացնելու մասին, սակայն գործն իր վարույթ ընդունելու մասին որոշում չի կայացրել: Քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քր. դատ. օր.-ի 184-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի հետևանքով կասկածի տակ կարող են դրվել ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Ա.Այվազյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ա.Այվազյանի կողմից թիվ 68119314 քրեական գործի նյութերով նոր քրեական գործ հարուցելու, այն առանձին վարութում առանձնացնելու, սակայն գործն իր վարույթ ընդունելու մասին որոշում չկայացնելու դրվագով Ա.Այվազյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և քննչական

կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

քաղ. Երևան 08 մայիսի 2015թ.

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Արարատի քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի քննիչ Արկադի Օսիպյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետ Թ. Պետրոսյանը 2015թ. ապրիլի 7-ին ՀՀ քննչական կոմիտեի նախագահին զեկուցագիր է ներկայացրել Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի քննիչ Արկադի Օսիպյանի կողմից N44101715, N44103215 և N44103915 քրեական գործերով դատավարական խախտումներ թույլ տալու վերաբերյալ:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ա. Օսիպյանին վերագրվող առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների:

1. **Քննիչ Արկադի Օսիպյանը թիվ 44101715 քրեական գործով 15 օրվա ընթացքում /03.03.2015-18.03.2015թ.թ./ որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի կատարել:**

Քննիչ Արկադի Օսիպյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ քննչական վարչության պետի հետ ունեցած անձնական հարաբերությունների լարվածության հետևանքով չի կարողացել կենտրոնանալ և համաչափ քննություն կատարել:Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նշված գործով չի ներկայացվել քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերը, որի պայմաններում պետք է կատարվեին քննչական գործողություններ: Նշված դրվագով քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստական հիմքերի որոշակիության տեսանկյունից պետք էր առարկայական ներկայացվեր, թե 15 օրվա ընթացքում քննիչը ողջամտորեն ի՞նչ հրատապ գործողություններ պետք է կատարեր, կամ ի՞նչ փաստական հանգամանքներ պետք է վերհաներ, որոնք չի կատարել:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

2. **Թիվ 44103215 քրեական գործով՝ 1 ամսվա ընթացքում /18.02.2015-18.03.2015թ.թ./ կատարել է միայն մեկ հարցաքննություն:**

Քննիչ Արկադի Օսիպյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ քննչական վարչության պետի հետ ունեցած անձնական հարաբերությունների լարվածության հետևանքով չի կարողացել կենտրոնանալ և համաչափ քննություն կատարել:Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նշված գործով չի ներկայացվել քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերը, որի պայմաններում պետք է կատարվեին քննչական գործողություններ: Նշված դրվագով քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստական հիմքերի որոշակիության տեսանկյունից պետք էր առարկայական ներկայացվեր, թե մեկ ամսվա ընթացքում քննիչը ողջամտորեն ի՞նչ հրատապ գործողություններ պետք է կատարեր, կամ ի՞նչ փաստական հանգամանքներ պետք է վերհաներ, որոնք չի կատարել:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

3. **Թիվ 44103915 քրեական գործով՝ տուժողին շուրջ 20 օր ուշացումով հարցաքննելը:**

Քննիչ Արկադի Օսիպյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ քննչական վարչության պետի հետ ունեցած անձնական հարաբերությունների լարվածության հետևանքով չի կարողացել կենտրոնանալ և համաչափ քննություն կատարել:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը դեպքի վայրի զննություն իրականացնելուց հետո չի հարցաքննել տուժողին՝ այն պայմաններում, երբ ակնհայտ առկա է եղել տուժողին հարցաքննելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերը:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

4. **Քննիչ Արկադի Օսիպյանը նշված քրեական գործերով արդեն իսկ հայտնի հանցագործությամբ տուժած անձանց քրեական գործ հարուցելու որոշման հետ միաժամանակ տուժող չի ճանաչել:**

Քննիչ Արկադի Օսիպյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ քննչական վարչության պետի հետ ունեցած անձնական հարաբերությունների լարվածության հետևանքով չի կարողացել քննություն կատարել:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հիշյալ դրվագով քննիչ Արկադի Օսիպյանն անձանց օրենքով նախատեսված իրավական և փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չի տվել, այն դեպքում, երբ արդեն իսկ հայտնի են եղել հանցագործությամբ տուժած անձիք: Հիշյալ դրվագով քննիչ Արկադի Օսիպյանը կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Թիվ 44101715 քրեական գործով 15 օր որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չկատարելու դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (6 կողմ, 0 դեմ):

2.Թիվ 44103215 քրեական գործով՝ 1 ամսվա ընթացքում միայն մեկ հարցաքննություն կատարելու դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (6 կողմ, 0 դեմ):

3.Թիվ 44103915 քրեական գործով՝ տուժողին շուրջ 20 օր ուշացումով հարցաքննելու դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

4.Վերը նշված քրեական գործերով արդեն իսկ հայտնի հանցագործությամբ տուժած անձանց քրեական գործ հարուցելու որոշման հետ միաժամանակ տուժող չճանաչելու դրվագով քննիչ Արկադի Օսիպյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

5.Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

քաղ. Երևան 08 մայիսի 2015թ.

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի պետ Սամսոն Մաթևոսյանի, նույն բաժնի ավագ քննիչ Արմեն Մաթևոսյանի և քննիչ Հովհաննես Սավդալյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ Ռ. Խաչատրյանը 2015թ. ապրիլի 7-ին և 8-ին միջնորդություններ է ուղարկել ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության պետ Ջ. Ֆարխոյանին, միջնորդելով՝ ծառայողական քննություն անցկացնել Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող N12119014 և N12200515 քրեական գործերով քննիչներ Արմեն Մաթևոսյանի և Հովհաննես Սավդալյանի կողմից քրեադատավարական նորմերի խախտումներ թույլ տալու, իսկ քննչական բաժնի պետ Սամսոն Մաթևոսյանի կողմից՝ նշված քրեական գործերի նախաքննության նկատմամբ ոչ պատշաճ հսկողություն իրականացնելու համար:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ա. Մաթևոսյանին, քննիչ Հ. Սավդալյանին և քննչական բաժնի պետ Ս. Մաթևոսյանին վերագրվող առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների:

1. <u>N12119014</u> քրեական գործով քննիչ Արմեն Մաթևոսյանը չի կատարել դատախազի օրինական ցուցումը՝ դատաէլեկտրատեխնիկական-դատատեխնիկական համալիր փորձաքննություն նշանակելու մասին:

Քննիչ Արմեն Մաթևոսյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ քրեական գործով դատաէլեկտրատեխնիկական-դատատեխնիկական համալիր փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն չի եղել: Դատախազի ցուցումը չի կատարել և չի բողոքարկել, համարելով, որ անցել են բողոքարկման համար նախատեսված ողջամիտ ժամկետները:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը փորձաքննություն նշանակելու դատախազի ցուցումը չկատարելու պայմաններում քրեական գործի վարույթը կարճել է: Հիշյալ գործողություններով քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Արմեն Մաթևոսյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2.Քննիչ Արմեն Մաթևոսյանը որոշում է կայացրել նույն քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, սակայն 24 ժամվա ընթացքում այն չի ուղարկել դատախազին՝ որոշման օրինականությունը ստուգելու համար:

Քննիչ Արմեն Մաթևոսյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ 2015թ. մարտի 31-ին որոշում է կայացրել հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին, սակայն նույն օրը դատախազություն չի հանձնել, անհետաձգելի գործեր ունենալու պատճառով: Միայն 2-օր անց՝ քրեական գործը հանձնել է դատախազություն, հաստատապես իմանալով, որ խախտել է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված՝ 24 ժամվա ընթացքում կայացված որոշումը դատախազին հանձնելու պահանջը:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը քրեական գործով կայացրած որոշումը 24 ժամվա ընթացքում չի ուղարկել դատախազություն՝ կարճման օրինականությունը ստուգելու համար: Հիշյալ գործողություններով քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 28-րդ կետի պահանջները:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Արմեն Մաթևոսյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

3.N 12200515 քրեական գործով քննիչ Հովհաննես Սավդալյանը չի պարզել դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ Հ. Ավագյանի մարմնական վնասվածքների առաջացումը վայր ընկնելու հետևանքով:

Քննիչ Հովհաննես Սավդալյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ հիշյալ հանգամանքը չի կարողացել պարզել, քանի որ այլ գործերով ծանրաբեռնված է եղել, իսկ ավելի ուշ՝ հեռացվել է քրեական գործի վարույթից:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հստակեցված չեն թե քննիչի կողմից նշված հանգամանքները պարզելու նպատակով հստակ ինչ քննչական գործողություններ կարող էր կատարել, որով հնարավոր կլիներ պարզել մարմնական վնասվածքի առաջացման պայմանները: Բացի այդ, տվյալ դեպքում բացակայում է որևէ քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքեր:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Հովհաննես Սավդալյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

4.Քննիչ Հովհաննես Սավդալյանը չի առգրավել տեսաձայնագրող սարքը և տեսագրառումները վերարտադրելու համար փորձաքննություն չի նշանակել:

Քննիչ Հովհաննես Սավդալյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ տուժողի ցուցմունքի համաձայն սարքն ունեցել է 10-15-օրյա հիշողություն, հետևաբար՝ քրեական գործը վարույթ ընդունելիս, արդեն իսկ տեսաձայնագրությունները պահպանված չէին կարող լինել: Բայց, այնուամենայնիվ, հետագայում որոշում է կայացրել առգրավելու մասին, կազմած արձանագրության մեջ նշել է վերը նշված հանգամանքն ու այդ հիմքով՝ չի առգրավել: Փորձաքննություն չի նշանակել, որովհետև՝ ըստ բանավոր տեղեկությունների հնարավոր չի եղել վերականգնել ոչնչացված տեսանյութը, քանի որ նախկինի վրա տպագրվել է նորը:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ խանութի տեսաձայնագրող սարքն առգրավելու և նրանում առկա տեսանյութը որպես կարևոր ապացույց քրեական գործին կցելու անհրաժեշտության մասին նշվել է դեռևս 2015թ. փետրվարի 16-ին՝ քրեական գործ հարուցելու մասին դատախազի որոշման մեջ: Մինչդեռ, քննիչն անտեսելով նշված պահանջը, առգրավում կատարելու մասին որոշում է կայացրել շուրջ մեկ ամիս անց՝ 2015թ. մարտի 12-ին: Հիմք ընդունելով աշխատակիցների հայտնած, որևէ կերպ չհիմնավորված տեղեկությունները, սարքը 15-օրյա հիշողություն ունենալու մասին, այն չի առգրավել և չի ներկայացրել փորձաքննության: Պատճառաբանությունը, այն մասին, որ հնարավոր չէ փորձաքննությամբ վերարտադրել ոչնչացվածը՝ նույնպես հիմնազուրկ է, քանի որ բացակայում է փաստաթղթային հիմնավորումը: Արդյունքում, հանցավորի մեղքը հիմնավորելու համար կարևոր ապացույց հանդիսացող տեսաձայնագրման սարքը ժամանակին չառգրավելը, քննությանն անհրաժեշտ ոչնչացված նյութը վերականգնելու համար դատահամակարգչային փորձաքննություն չնշանակելը, կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Նշված գործողություններով քննիչը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Հովհաննես Սավդալյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

5.Քննչական բաժնի պետ Սամսոն Մաթևոսյանը հսկողություն չի իրականացրել նշված քննիչների կողմից իրենց վարույթներում քննվող քրեական գործերով քննչական կամ այլ դատավարական գործողությունները, նաև՝ դատախազի օրինական ցուցումները ժամանակին և պատշաճ կատարելու նկատմամբ:

Քննչական բաժնի պետ Սամսոն Մաթևոսյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի կարգով մշտական հսկողություն է իրականացնում քննիչների կողմից քրեական գործերով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու ինչպես նաև՝ դատախազի ցուցումները ժամանակին և որակով իրականացնելու նկատմամբ: N12119014 քրեական գործով քննիչ Արմեն Մաթևոսյանը կատարել է անհրաժեշտ բոլոր քննչական և այլ դատավարական գործողությունները: Ծանոթ է դատախազի ցուցումի բովանդակությանը: Այն հիմնավոր չի եղել: Նշված ցուցումով դատախազը փորձել է ձգձգել քրեական գործի նախաքննությունը: Գործով համալիր փորձաքննություն նշանակելու անհրաժեշտություն չի եղել, ինչի համար իր բանավոր ցուցումով քննիչ Արմեն Մաթևոսյանը կարճել է քրեական գործով վարույթը: Հետագայում տեղեկացել է, որ ծանրաբեռնվածության պատճառով քննիչը 2 օր ուշացումով է նույն քրեական գործը կարճման որոշման հետ հանձնել դատախազություն՝ որոշման օրինականությունը ստուգելու համար: Բանավոր կարգով դիտողություն է արել նրան, սակայն օպերատիվ խորհրդակցություն չի հրավիրել և չի փաստաթղթավորել կատարվածը: Պնդել է, որ քրեական գործի նախաքննության ընթացքում քննիչ Արմեն Մաթևոսյանի կողմից դատավարական խախտումներ թույլ չեն տրվել: Ինչ վերաբերում է բաժնի քննիչ Հովհաննես Սավդալյանի վարույթում քննված N 12200515 քրեական գործով դատախազի միջնորդության մեջ նշված դատավարական խախտումներին, ապա՝ տեղեկություն չի ունեցել նշված գործի հանգամանքներից, քանի որ այն խնդրահարույց չլինելու պատճառով իրեն չի զեկուցվել:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը, նկատի ունենալով, որ արարքների կատարման պահին գերատեսչական իրավական ակտերով տարանջատված չեն եղել քննիչի վերադասի և անմիջական վերադասի լիազորությունները, ուստի նշված դրվագով կարգապահական հանձնաժողովը որոշել է, որ քննչական բաժնի պետ Սամսոն Մաթևոսյանին չի կարող վերագրվել նշված առերևույթ իրավախախտումները:

Հանձնաժողով, գործելով ի պաշտոնե պարզել է, որ քննչական բաժնի պետ Սամսոն Մաթևոսյանը քննիչի վարույթում գտնվող քրեական գործով գործով քննիչին բանավոր ցուցում է տվել վարույթը կարճելու մասին, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասին պահանջներին, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածում վարույթն իրականացնող քննիչի ոչ վերադասը, և ոչ էլ անմիջական վերադասը իրավասություն չունեն քրեական գործի վարույթը կարճելու մասին ցուցում տալ:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի պետ Սամսոն Մաթևոսյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական

կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դատաէլեկտրատեխնիկական և դատատեխնիկական համալիր փորձաքննություն նշանակելու դատախազի ցուցումը չկատարելու պայմաններում վարույթը կարճելու դրվագով ավագ քննիչ Արմեն Մաթևոսյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 1 դեմ):

2. Քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման օրինականությունը ստուգելու համար՝ որոշումը դատախազին սահմանված ժամկետում չտրամադրելու դրվագով ավագ քննիչ Արմեն Մաթևոսյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

3. Հ. Ավագյանի մարմնական վնասվածքները՝ վայր ընկնելու հետևանքով չառաջանալու հանգամանքները, քննությամբ չպարզելու դրվագով քննիչ Հովհաննես Սավդայյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (6 կողմ, 0 դեմ):

4. Քրեական գործով տեսաձայնագրող սարքը չառգրավելու և տեսագրառումները վերարտադրելու համար՝ փորձաքննություն չնշանակելու դրվագով քննիչ Հովհաննես Սավդայյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (4 կողմ, 2 դեմ):

5. Օրենքով չնախատեսված ցուցում տալու դրվագով՝ քննչական բաժնի պետ Սամսոն Մաթևոսյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (5 կողմ, 1 դեմ):

6. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

22 մայիսի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Աղասի Իսահակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Շիրակի մարզի դատախազ Ր.Ասլանյանի 02.03.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Աղասի Իսահակյանը վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին և 325-րդ հոդվածի 1-ին մասերի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ՀԿԳ ավագ քննիչ Ա.Իսահակյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1.2014թ. դեկտեմբերի 10-ին «Ֆինքա» ՈՒՎԿ ՓԲ ընկերության գլխավոր տնօրեն Հ.Թոխմախյանը տրամադրել է 2008-2012թթ. ընթացքում կատարված փոփոխություններով վարկային ձեռնարկները, սակայն քննիչը փաստացի ձեռք բերելով փորձաքննություն կատարելու համար անհրաժեշտ ելակետային տվյալներ, դատատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննությունը նշանակել է շուրջ 3 ամիս անց՝ 2015թ. մարտի 6-ին, այն դեպքում, երբ 23.12.2014 և 23.02.2015թթ. որոշումներ է կայացրել քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին և որպես հիմնական պատճառաբանություն նշել է հիշյալ փորձաքննությունը նշանակելու և եզրակացությունը ստանալու անհրաժեշտությունը:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Իսահակյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ծանրաբեռնվածության պատճառով դատատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննությունը նշանակել է շուրջ 3 ամիս անց՝ 2015թ. մարտի 6-ին, այդ ընթացքում կատարել է բազմաթիվ քննչական և այլ դատավարական գործողություններ, մեղադրանք է առաջադրել մի քանի անձանց: Բացի այդ, վարույթում քննվող առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված 2 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկել է դատարան:

ՈՒսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ փորձաքննության համար անհրաժեշտ 2008-2012թթ. ընթացքում կատարված փոփոխություններով վարկային ձեռնարկները կցված են եղել քրեական գործին և գտնվել են քննիչի տրամադրության տակ և նման պայմաններում շուրջ 3 ամիս անց փորձաքննություն նշանակելը չի հանգեցրել ապացույցների կորստի, այսինքն՝ չի կարող համարվել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով օրենքի կոպիտ խախտում:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Ա.Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

2. Շիրակի մարզի դատախազի տեղակալ Ա.Պողոսյանի 28.11.2014թ. ցուցումի 2015թ. փետրվարի 17-ին որոշում է կայացրել Արմեն Գևորգյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 214-րդ և 325-րդ հոդվածների 1-ին մասերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է

ընտրվել կալանավորումը և հայտարարվել հետախուզում: Մինչդեռ քննիչը առանց պարզելու վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված լինելու հանգամանքը, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում է կայացրել միջին ծանրության մեղսագրվող հանցավոր արարքներից վերջինն ավարտված համարելու պահից 7 տարի անց՝ չպահպանելով ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի պահանջները, ընդ որում Ա. Գևորգյանին, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական մասում ամբողջությամբ չի արտացոլվել գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և վերջինիս կողմից կատարված հակահիրավական բոլոր փաստերը, մասնավորապես ընդգրկված չէ վարկառու Ա.Պողոսյանի դրվագը և նշված դրվագին քննիչը քրեահիրավական գնահատական չի տվել:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Իսահակյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ կատարել է հսկող դատախազի ցուցումները:

ՈՒսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Շիրակի մարզի դատախազի տեղակալ Ա.Պողոսյանը 28.11.2014թ. ցուցումում բարձրացրել է Ա.Գևորգյանին մեղադրանք առաջադրելու հարցը, որտեղ վաղեմության ժամկետի անդրադարձ չի կատարել: Քննիչը համաձայնվելով դատախազի ցուցումի պահանջների հետ, կատարել է այն՝ Ա.Գևորգյանի նկատմամբ հարուցել է քրեական հետապնդում՝ ներգրավվել է որպես մեղադրյալ:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Ա.Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

3.Հսկող դատախազի ցուցումների պահանջները կատարել է մասնակի,մասնավորապես՝

ա) «Ֆինքա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի ներքին աուդիտի կողմից կազմված զեկուցագրերում և հաշվետվություններում առկա մի շարք անձանց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու (տաքսի ծառայությունների մատուցման, ամրանների վաճառք, հագուստի առևտուր և այլն) վերաբերյալ ցուցում է տրվել համապատասխան հարցում կատարել հարկային տեսչություն, պարզելու այդ անձինք հարկային տեսչությունում գրանցված են, թե ոչ, հարկային պարտավորություններ ունեն, թե ոչ և անհրաժեշտության դեպքում նշանակել հարկային ստուգում՝ ապօրինի ձեռնարկատիրական գործունեության հետևանքով պետությանը պատճառված վնասի չափը պարզելու համար: Սակայն վարույթն իրականացնող մարմինը ցուցաբերելով անգործություն, ցուցումի պահանջներն այդ մասով չի կատարել: Հատկանշական է, որ 2014թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ ֆինանսների նախարարության Գյումրու տարածքային հարկային տեսչությունից ստացված թիվ 6421 գրությամբ հայտնվել է, որ Ա.Ավագյանի, Ա.Մարտիրոսյանի, Հ.Առաքելյանի, Յ.Անտոնյանի, Կ.Սահակյանի, Հ.Դավթյանի, Ա.Կարապետյանի, Հ.Պապոյանի, Ա.Պետրոսյանի, Ա.Գևորգյանի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու համար անհրաժեշտ է տեսչությանը ներկայացնել վերջիններիս անձնագրային տվյալները և հաշվառման հասցեները, սակայն վարույթն իրականացնող մարմինը բավարարվել է միայն գրությունը քրեական գործին կցելով և որևէ տեղեկատվություն չի տրամադրել, որի պատճառով անհայտ է հիշյալ անձինք հարկային տեսչությունում հաշվառված են, թե՝ ոչ, հարկային պարտավորություններ ունեն, թե՝ ոչ:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Իսահակյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նշված գործողություններ կատարելը իրենից հրատապություն չի պահանջել, վերը նշված քաղաքացիների վերաբերյալ տվյալները գտնվել են քրեական գործի նյութերի տարբեր հատորներում, որոնց հայտնաբերումը և հարկային տեսչություն ներկայացնելը, իրենից որոշակի ժամանակ է պահանջել: Բացի այդ զբաղված է եղել վարույթում քննվող այլ քրեական գործերով քննչական և դատավարական գործողություններ կատարելով:

ՈՒսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նշված գործողությունների կատարումը հրատապ չի եղել և ապացույցների կորստի չի հանգեցրել: Նման պայմաններում քննիչն ունի հայեցողություն՝ նախաքննության ընդհանուր ժամկետներում որոշելու դատավարական գործողություններ կատարելու ժամկետները:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Ա.Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

բ) Քրեական գործի ստուգմամբ արձանագրվել է, որ հաճախորդի և երաշխավորի անձնագրերի կրկնօրինակները պատճենահանվել են նախորդ փուլի վարկային գործին կցված կրկնօրինակներից: Մինչդեռ այդ կապակցությամբ վարույթն իրականացնող մարմինը չի պահանջել և գործին չի կցել նախորդ փուլի վարկային գործում առկա հաճախորդի և երաշխավորի անձնագրերի կրկնօրինակները, դրանցով չի նշանակել համապատասխան փորձաքննություն՝ պարզելու համար պատճենահանված անձնագրերի ծագումնաբանությունը, ինչի կապակցությամբ նույնպես նախկինում ցուցում էր տրվել վարույթն իրականացնող քննիչին, սակայն ցուցումի պահանջները այդ մասով մնացել են անկատար:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Իսահակյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ թեև անհրաժեշտություն չի եղել փորձաքննություն նշանակելու, քանի որ այն քրեական գործի ընթացքի լուծման համար որևէ նշանակություն ունենալ չէր կարող ունենալ, սակայն հետագայում նշանակել է փորձաքննություն:

ՈՒսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նշված գործողությունների կատարումը հրատապ չի եղել և ապացույցների կորստի չի հանգեցրել, քանի որ փորձաքննության համար անհրաժեշտ նյութերը կցված են եղել քրեական գործին:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Ա.Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

գ) Դատաձեռագրաբանական փորձաքննության եզրակացության համաձայն Ջուլիետա Գրեյանին տրված 14.03.2011թ. տեղեկանքի ստորին մասում առկա կլոր կնիքի դրոշմը չի թողնվել «Մեր Մկրտչյան թանգարան» ՀՈԱ կազմակերպության կլոր կնիքով, այլ կատարվել է, համակարգչին կից գունավոր շիթային տպիչ սարքով: Այդ կապակցությամբ լրացուցիչ չի հարցաքննվել Ջուլիետա Գրեյանը՝ պարզելու համար երբ, ինչպես և ինչ հանգամանքներում է կազմվել հիշյալ տեղեկանքը, ով է այն ներկայացրել վարկային կազմակերպություն:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Իսահակյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ Ջ.Գրեյանին լրացուցիչ հարցաքննելու անհրաժեշտություն չի եղել, քանի որ 11.07.2013թ. որպես վկա

հարցաքննության ժամանակ Ջ.Գրեյանը ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը իր անվամբ տրված կեղծ տեղեկանքի մասին ոչինչ չի իմացել: Տեղյակ չի եղել նաև, որ երաշխավոր հանդես գալու համար անհրաժեշտ է տեղեկանք ներկայացնել աշխատանքի վայրից, եթե նման տեղեկանք իրենից պահանջած լինեին, ինքը այն կներկայացներ իր աշխատավայրից: Չգիտի, թե ով, ինչ հանգամանքներում է կազմել հիշյալ կեղծ տեղեկանքը և այն ներկայացրել վարկային կազմակերպություն: Իսկ ցուցումը չի բողոքարկել ծանրաբեռնվածությունից ելնելով:

ՈՒսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը Ջ.Գրեյանը 11.07.2013թ. հարցաքննվել է որպես վկա և ցուցմունք տվել, որ ինքը իր անվամբ տրված կեղծ տեղեկանքի մասին ոչինչ չի իմացել: Նման պայմաններում Ջ. Գրեյանին լրացուցիչ չհարցաքննելը «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով չի կարող համարվել օրենքի կոպիտ խախտում:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ՀԿԳ ավագ քննիչ Ա.Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

դ) Վարույթն իրականացնող մարմինը տուժողներին և մեղադրյալներին չի ծանոթացրել դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական համալիր փորձաքննությունների եզրակացություններին, ինչով իսկ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Իսահակյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական համալիր փորձաքննությունների եզրակացություններին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում չի ծանոթացրել՝ պայմանավորված աշխատանքային ծանրաբեռնվածությունից:

ՈՒսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քրեական գործով դատաձեռագրաբանական և դատափաստաթղթաբանական համալիր փորձաքննություն քննիչը նշանակել է 08.08.2013թ., որի եզրակացությունը ստացվել է 28.10.2013թ.-ին և 22.05.2014թ., որի եզրակացությունը ստացվել է 02.07.2014թ՝ այսինքն առերևույթ դատավարական խախտումները քննիչի կողմից թույլ են տրվել մինչև ՀՀ քննչական կոմիտեում պաշտոնի նշանակվելը, հետևաբար կարգապահական հանձնաժողովը իրավասու չէ գնահատական տալ քննիչի գործողություններին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2008-2012թթ. ընթացքում կատարված փոփոխություններով վարկային ձեռնարկները ձեռք բերելուց հետո շուրջ 3 ամիս անց դատատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննությունը նշանակելու դրվագով Ա. Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ 8, դեմ 0):

2. Ա.Գևորգյանին մեղսագրվող հանցավոր արարքներից վերջինն ավարտված համարելու պահից 7 տարի անց՝ նրան մեղադրանք առաջադրելու դրվագով Ա. Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 8, դեմ՝ 0):

3. Մի շարք անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հանգամանքը պարզելու ուղղությամբ նրանց անձնագրային տվյալները և հաշվառման հասցեները Գյումրի քաղաքի տարածքային հարկային տեսչություն չներկայացնելու դրվագով Ա. Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 8, դեմ՝ 0):

4.Նախորդ փուլի վարկային գործում առկա հաճախորդի և երաշխավորի անձնագրերի կրկնօրինակները չպահանջելու, քրեական գործի նյութերին չկցելու, պատճենահանված անձնագրերի ծագումնաբանությունը պարզելու համար համապատասխան փորձաքննություն չնշանակելու դրվագով Ա. Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ 7, դեմ 1):

5. Ջուլիետա Գրեյանին լրացուցիչ չհարցաքննելու դրվագով Ա. Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ 8, դեմ 0):

6.Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

կարգապահական խախտման փաստի բացակայության մասին

22 մայիսի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Անդրանիկ Անտոնյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ Հ.Գրիգորյանի 16.04.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Անդրանիկ Անտոնյանը վարույթում քննված՝ 6 քրեական գործով նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ա.Անտոնյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Արթուր Խաչատուրյանի կողմից զինվորական ծառայության հերթական՝ 2014թ. ձմեռային զորակոչից խուսափելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված թիվ 90267415 քրեական գործով՝

-դատվածության պահանջագրում սխալ է նշել զորակոչիկի ազգանունը՝ <u>Խաչատուրյանի</u> փոխարեն նշելով <u>Խաչատրյան</u>:

-ՍԷԿՏ համակարգից հարցումը կատարել է այլ անձի անձնագրի համարով և ազգանունով՝ ԱՀ 0470892 սերիայի և համարի փոխարեն նշելով ԱՀ 0258427 համարը և Խաչատուրյանի փոխարեն նշելով Խաչատրյան ազգանունը:

2. Թիվ 90267315 քրեական գործով զորակոչից խուսափող Արամ Մանուկյանի վերաբերյալ դատվածության պահանջագրում սխալ է նշել զորակոչիկի հայրանունը՝ Արամ <u>Արսենի</u> Մանուկյանի փոխարեն՝ նշելով Արամ <u>Արմենիսի</u> Մանուկյան:

3. Թիվ 90284515 քրեական գործով զորակոչից խուսափող Միսակ Զաքարյանի վերաբերյալ դատվածության պահանջագիրը ստուգել է սխալ տվյալներով, Միսակի փոխարեն նշելով <u>Միասնիկ</u>:

Հիշյալ առերևույթ իրավախախտումների վերաբերյալ Ա. Անտոնյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ իրավախախտումները ընդունում է, դրանք պայմանավորված են եղել իր ծանրաբեռնվածությամբ, անուշադրությամբ և շտապողականությամբ:

ՈՒսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ առերևույթ իրավախախտումները տեխնիկական վրիպման արդյունք են և քրեական գործով չեն հանգեցրել ապացույցների կորստի, հետևաբար հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով Ա.Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

4. Թիվ 90267415 և 90267615 քրեական գործով զինակոչիկներ՝ Ա.Խաչատուրյանին և Հ.Կիրակոսյանին հայտնաբերելու նպատակով հանձնարարությունը տվել է ոստիկանության մեկ այլ բաժնի՝ Արաբկիրի փոխարեն Կենտրոնականի բաժնին:

Հիշյալ իրավախախտումների վերաբերյալ Ա.Անտոնյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ զինակոչիկների վերաբերյալ նյութերը քննչական բաժնում ստացվել են ՀՀ ՊՆ Կենտրոնականի տարածքային զինվորական կոմիսարիատից և ինքը հանձնարարությունը տվել է ոստիկանության Կենտրոնականի բաժնին՝ չմտածելով, որ երկու ուժային կառույցներում վարչական շրջանների բաժանումը տարբեր է:

ՈՒսումնասիրելով նյութերը՝ Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի իրավախախտումները տեխնիկական վրիպման արդյունք են և քրեական գործով չեն հանգեցրել ապացույցների կորստի, հետևաբար հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով Ա. Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

5. 29.11.2014թ. ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ 1-ին մասով հարուցել է թիվ 90263314 քրեական գործը՝ ՀՀ ՊՆ 14746 զորամասի պայմանագրային զինծառայող Վ.Եգորյանի ՀՀ ՊՆ-ին պատկանող «ԶԻԼ 131» մակնիշի ավտոմեքենայի և քաղաքացի Հրանտ Խուրշուդյանի վարած մարդատար «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի բախման հետևանքով Հ.Խուրշուդյանի առողջությանն անզգուշությամբ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքի առթիվ: Քրեական գործով արարքը սխալ է որակել և քրեական գործը պետք է հարուցեր ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածով:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ա.Անտոնյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածով որակելու համար անհրաժեշտ է, որպեսզի առկա լինի զինվորական կանոնագրքերով նախատեսված կանոնների խախտում, որի հետևանքով անձի առողջությանը պատճառվել է միջին կամ ծանր վնաս, ինչպես նաև այլ ծանր հետևանքներ, այլապես՝ նման խախտումների բացակայության պայմաններում անհրաժեշտ է ղեկավարվել ընդհանուր կանոններով, իսկ քննարկվող դեպքում որպես ընդհանուր կանոն հանդիսացել է ճանապարհային երթևեկության կանոնները: Նկատի ունենալով, որ զինվորական կանոնագրքերով նախատեսված կանոնների խախտում քրեական գործը հարուցելու պահին պայմանագրային զինծառայողի գործողություններում չի նկատել, այդ պատճառով քրեական գործը հարուցել է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Հայտնեց նաև, որ քրեական գործով դեռևս չի ստացել դատաավտոտեխնիկական և դատաապրանքագիտական համալիր փորձաքննության եզրակացությունը, որը ստանալուց հետո նոր միայն կորոշվի քրեական գործի վերջնական ընթացքը:

Նկատի ունենալով, որ Կարգապահական հանձնաժողովը իրավասու չէ որոշելու արարքի քրեաիրավական որակումը, ուստի չի կարող գնահատական տալ սույն դրվագով քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտմանը:

6. Թիվ 90263314 գործով քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին 29.11.2014թ. կայացված միասնական որոշումը ժամանակագրական առումով քրեական գործի նյութերին կցել և համարակալել է ավելի ուշ, ինչի հետևանքով խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

-12.12.2014թ. որոշում է կայացրել օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին, որի կատարումը հանձնարարել է ռազմական ոստիկանությանը, սակայն քրեական գործի նյութերից բացակայում է հիշյալ որոշման պատճենը, ինչի հետևանքով խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Հիշյալ իրավախախտումների վերաբերյալ Ա.Անտոնյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ քրեական գործը մի քանի անգամ քանդել, ապա նորից կարել է, գործում տարբեր փաստաթղթեր ավելացնելու նպատակով և հնարավոր է այդ ընթացքում պատահաբար փաստաթղթերի հերթականությունը խախտված լինի, ինչը չի նկատել:

Օպերատիվ–հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին որոշման պատճենը՝ գործի նյութերից բացակայելու վերաբերյալ նշեց, որ դա տեխնիկական վրիպման արդյունք է: Առանց դատաբժշկական փորձաքննության եզրակացության քրեական գործ հարուցելու վերաբերյալ, Ա.Անտոնյանը նշեց, որ մինչ Հ.Խուրշուդյանի ստացած մարմնական վնասվածքների ծանրության աստիճանի վերաբերյալ եզրակացություն ստանալը, հեռախոսազրույց է ունեցել դատաբժիշկ փորձագետի հետ և նախապես տեղեկացել Հ. Խուրշուդյանի ստացած մարմնական վնասվածքների ծանրության աստիճանի վերաբերյալ: Տվյալ հեռախոսազրույցի մասին կազմել է համապատասխան արձանագրություն, սակայն իր անուշադրության պատճառով արձանագրությունը չի կարվել քրեական գործի նյութերում:

ՈՒսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ առերևույթ իրավախախտումները տեխնիկական վրիպման արդյունք են և քրեական գործով չեն հանգեցրել ապացույցների կորստի, հետևաբար Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագներով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով Ա. Իսահակյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մի շարք դատավարական փաստաթղթեր տառասխալներով կազմելու դրվագով Ա. Անտոնյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ 7, դեմ 1):

2. ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը հանձնարարություն չտալու դրվագով Ա. Անտոնյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ 7, դեմ 1):

3. Քրեական գործ հարուցելու և վարույթի տակ ընդունելու միասնական որոշումը ժամանակագրական առումով քրեական գործի նյութերին ավելի ուշ կցելու և համարակալելու, օպերատիվ–հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին որոշման պատճենը քրեական գործի նյութերից բացակայելու դրվագով Ա. Անտոնյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ 8, դեմ 0):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

ք. Երևան 22 մայիսի 2015թ.

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Բակուր Օհանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2015թ. ապրիլի 17-ին և 20-ին ՀՀ դատախազության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազներ Մ.Ալեքսանյանը և Վ. Պետրոսյանը, ապա՝ ն/թ մայիսի 13-ին նույն վարչական շրջանի դատախազության դատախազներ Մ. Ալեքսանյանը և Ա. Ոսկանյանը միջնորդություններ են ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի /այսուհետ՝ ՔԿ/ Երևան քաղաքի քննչական վարչության պետ Ջ. Ֆարխոյանին՝ միջնորդելով ծառայողական քննություն անցկացնել վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Բակուր Օհանյանի նկատմամբ:

Երևան քաղաքի քննչական վարչության պետ Ջ. Ֆարխոյանը թվարկված միջնորդություններն ուղարկել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Նախնական ուսումնասիրություն ընթացքում Բ. Օհանյանի վարույթում քննվող քրեական գործերից երկուսում հայտնաբերված քրեադատավարական նորմերի խախտումները նույնպես դարձել են ուսումնասիրության առարկա:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Բ. Օհանյանին վերագրվող առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված քրեական գործերի և դրվագների:

1. N16811914 քրեական գործով քննիչ Բ. Օհանյանը /26.02.2015թ.-16.04.2015թ./ շուրջ 50 օր որևէ դատավարական գործողություն չի կատարել: Մինչդեռ, անհրաժեշտ է եղել անձնագրային բաժանմունքից առգրավել Ա. Մովսիսյանի լուսանկարը և ճանաչման ներկայացնել տուժողներին, ինչից հետո՝ գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ որոշում կայացնել Ա. Մովսիսյանին որպես մեղադրյալ ներգրավելու, նրան հետախուզում հայտարարելու, խափանման միջոցի հարցը լուծելու, խարդախությամբ հափշտակված ավտոմեքենաների գտնվելու վայրերը պարզելու, փաստացի տիրապետողին /ներին/, օգտագործողին /ներին/, հայտնաբերելու, դրանց նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու, կատարված հանցագործությամբ տուժողին պատճառված նյութական վնասը վերականգնելու ուղղությամբ անհետաձգելի գործողություններ իրականացնել:

Ավագ քննիչ Բ. Օհանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնից տեղափոխվելով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին՝ միաժամանակ վարույթ է

ընդունել 12 քրեական գործեր, որոնց մեծամասնությունը բազմադրվագ և երկու հատորից բաղկացած գործեր են եղել: Վարույթում առկա մյուս քրեական գործերի ընթացքը լուծելու հետ միաժամանակ քրեական գործով չի կարողացել ժամանակին այդ անհրաժեշտ գործողությունները կատարել և շուրջ 50 օր այն մնացել է անշարժ վիճակում:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչն առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով դրսևորել է անգործություն, քրեական գործով շուրջ 50 օր քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում չի կատարել վերը նշված դատավարական գործողություններ, քննիչը բավարար ապացույցներ ձեռք չի բերել քրեական գործով հանցանք կատարած անձի արարքին իրավական գնահատական տալու, տուժողներին պատճառված նյութական վնասը վերականգնելու ուղղությամբ:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2.N16819014 քրեական գործով քննիչ Բ. Օհանյանը չի կատարել «Կոշ» ՔԿՀ դատապարտյալներ Դ. Բաբայանին և Գ. Մկրտչյանին մանրամասն հարցաքննելու, նաև՝ ցուցմունքներում առկա հակասությունների ու այլ հանգամանքների շուրջ վկաներ Մ. Նասիբյանին և Ս. Մկրտչյանին լրացուցիչ հարցաքննելու դատախազի օրինական ցուցումը: Բացի այդ, շուրջ 50 օր /02.03.2015թ.-18.04.2015թ./ քրեական գործով որևէ գործողություն չի կատարել:

Քննիչ Բ. Օհանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ վարույթում քննվող մյուս քրեական գործերի ընթացքը լուծելու հետ միաժամանակ նշված քրեական գործով չի կարողացել կատարել դատախազի օրինական ցուցումը, ինչպես նաև այլ անհրաժեշտ գործողություններ, որի պատճառով շուրջ 50 օր քրեական գործն անշարժ է մնացել:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը չի կատարել դատախազի՝ կոնկրետ դատավարական գործողություններ կատարելու մասին ցուցումը, որը ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի, ինչպես նաև՝ առանց իրավաչափ նպատակի տևական ժամկետով դրսևորել է անգործություն՝ շուրջ 50 օր քրեական գործով չի կատարել գործողություններ:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

3.N 16201514 քրեական գործով քննիչ Բ. Օհանյանն ավելի քան 2 ամիսների ընթացքում /02.03.2015թ.-04.05.2015թ./ քրեական գործով կատարել է ընդամենը երեք հարցաքննություն, մինչդեռ՝ քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնելու որոշման պատճառաբանական մասում նշել է, որ. «...անհրաժեշտ է Մ. Բաղիրյանից ստանալ նրա ձեռագրի ազատ և փորձառական նմուշները, նշանակել դատաձեռագրաբանական փորձաքննություն, ստանալ եզրակացությունը և կատարել անհրաժեշտ այլ գործողություններ, հանցավորի գործողություններին տալ իրավական գնահատական, ապահովել նախաքննության բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ կատարումը»:

Քննիչ Բ. Օհանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ վարույթում քննվող մյուս քրեական գործերի ընթացքը լուծելու հետ միաժամանակ նշված քրեական գործով չի կարողացել ավելի քան 2 ամսվա ընթացքում անհրաժեշտ գործողությունները ժամանակին և օրինական կարգով կատարել:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ համաձայն քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնելու մասին որոշման պատճառաբանական մասի, քննիչը գործի համար էական նշանակություն ունեցող անհրաժեշտ գործողությունները ժամանակին չի կատարել ու առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով անգործություն է դրսևորել:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

4.N 16810514 քրեական գործով քննիչ Բ. Օհանյանը չի կատարել դատախազի օրինական ցուցումը, այն է՝ չի ստուգել մեղադրյալներ Մ. Նասիբյանի, Ս. Մկրտչյանի և Վ. Պետրոսյանի ցուցմունքներում առկա հանգամանքները, նրանց մասնակցությամբ մատնանշված վայրի և տեղանքի զննություններ չի կատարել: Չի ստացել նշված մեղադրյալների բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումները և տեղակայումները: Չի պարզել Հ. Գրիգորյանի ցուցմունքում նշված անձանց և չի հարցաքննել նրանց: Չի հարցաքննել Գ. Մկրտիչյանին և իրավական գնահատական չի տվել նրա գործողություններին: Մեղադրյալների ցուցմունքներում առկա հակասությունների շուրջ չի կատարել առերեսումներ և գնահատելով ապացույցները՝ չի փոփոխել նրանց առաջադրված մեղադրանքները: Բացի այդ, Բ. Օհանյանը գործը վարույթում գտնվելու ավելի քան 2 ամիսների ընթացքում /26.02.2015թ.-04.05.2015թ./ քրեական գործով որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի կատարել: Ավելին, ստուգման նպատակով քրեական գործը չի ուղարկել դատախազություն:

Քննիչ Բ. Օհանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ վարույթում քննվող մյուս քրեական գործերի ընթացքը լուծելու հետ միաժամանակ նշված քրեական գործով չի կարողացել կատարել դատախազի օրինական ցուցումը, այլ անհրաժեշտ գործողություններ, որի պատճառով շուրջ ավելի քան 2 ամիս քրեական գործն անշարժ է մնացել:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը գործը վարույթում գտնվելու ավելի քան 2 ամիսների ընթացքում /26.02.2015թ.-04.05.2015թ./ առանց իրավաչափ նպատակի դրսևորել է անգործություն: Բացի այդ, քննիչը *հսկողության նպատակով պահանջվող քրեական գործը չի հանձնել դատախազին*:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

5.N 16807213 քրեական գործով քննիչ Բ. Օհանյանը չի կատարել դատախազի օրինական ցուցումը, այն է՝ չի զննել տուժող Վ. Ղազարյանի հեռախոսահամարների վերծանումներն ու արդյունքներով համապատասխան քննություն չի կատարել: Չի հարցաքննել մաքսատան աշխատակիցներին պարզելու քննությանն անհրաժեշտ բազմաթիվ

հանգամանքներ: Սահմանված կարգով չի ստուգել Վ. Ղազարյանին պատկանող ՍՊ ընկերությունների ֆինանսական գործունեությունները և չի պարզել դրանց հետ առնչվող մի շարք հանգամանքներ:

Քննիչ Բ. Օհանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ վարույթում քննվող մյուս քրեական գործերով զբաղված լինելով չի կարողացել կատարել դատախազի օրինական ցուցումն ու քննությանն անհրաժեշտ այլ գործողություններ:

Ուսումնասիրելով նյութերը, կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչը տվյալ քրեական գործով կատարել է մի շարք դատավարական գործողություններ /մաքսային պահեստի հերթափոխի պահակների հարցաքննություն և այլն/: Տուժող Վ. Ղազարյանի հեռախոսահամարների վերծանումներն չզննելը պայմանավորված է եղել լազերային սկավառակի անսարքության հանգամանքով: Քննիչը միջոցներ ձեռնարկել է կապի օպերատորից հեռախոսահամարների վերծանումների լազերային սկավառակի երկրորդ օրինակը ձեռքբերելու ուղղությամբ: Վ. Ղազարյանին պատկանող ՍՊ ընկերությունների ֆինանսական գործունեությունները սահմանված կարգով չստուգելու կապակցությամբ, Հանձնաժողովը պարզվեց, որ վարույթն իրականացնող մարմինը նախկինում նշանակել է ստուգումներ, որոնք գտնվել են ընթացքի մեջ:

Հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքներում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի» 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. N16811914 քրեական գործով շուրջ 50 օր քննչական և այլ դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հիմքերի ակնհայտ առկայության պայմաններում դատավարական գործողություն չկատարելու, Ա. Մովսիսյանի լուսանկարը տուժողներին ճանաչման չներկայացնելու, նրան որպես մեղադրյալ չներգրավելու, հետախուզում չհայտարարելու, խափանման միջոցի հարցը չլուծելու, խարդախությամբ հափշտակված ավտոմեքենաների գտնվելու վայրերը չպարզելու ու այդ ուղղությամբ քննություն չկատարելու, տուժողին պատճառված նյութական վնասը վերականգնելու ուղղությամբ անհետաձգելի գործողություններ չիրականացնելու դրվագով՝ ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):

2. N 16819014 քրեական գործով «Կոշ» ՔԿՀ դատապարտյալներ Դ. Բաբայանին և Գ. Մկրտչյանին հարցաքննելու, ցուցմունքներում առկա հակասությունների ու այլ հանգամանքների շուրջ վկաներ Մ. Նասիբյանին և Ս. Մկրտչյանին լրացուցիչ հարցաքննելու դատախազի ցուցումը չկատարելու, շուրջ 50 օր առանչ իրավաչափ նպատակի անգործություն դրսևորելու դրվագով՝ ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):

3. N 16201514 քրեական գործով ավելի քան 2 ամիսների ընթացքում Մ. Բաղիրյանից ձեռագրի ազատ և փորձառական նմուշները չստանալու, դատաձեռագրաբանական փորձաքննություն չնշանակելու և քրեական գործով անհրաժեշտ ու անհետաձգելի այլ գործողություններ չկատարելու դրվագով ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):

4. N 16810514 քրեական գործով ավելի քան 2 ամիսների ընթացքում /26.02.2015թ.-04.05.2015թ./ առանց իրավաչափ նպատակի անգործություն դրսևորելու, ինչպես նաև հսկողության նպատակով պահանջվող քրեական գործը դատախազին չհանձնելու դրվագով ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (8 կողմ, 0 դեմ):

5. N16807213 քրեական գործով տուժող Վ. Ղազարյանի հեռախոսահամարների վերծանումները զննելու ու արդյունքներով համապատասխան քննություն կատարելու, մաքսատան աշխատակիցներին պարզելու, հարցաքննելու և քննությամբ բազմաթիվ հանգամանքներ պարզելու, Վ. Ղազարյանին պատկանող ՍՊ ընկերությունների ֆինանսական գործունեությունները ստուգելու և սահմանված կարգով փորձաքննություններ նշանակելու վերաբերյալ դատախազի օրինական ցուցումը չկատարելու դրվագով ավագ քննիչ Բ. Օհանյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 1 դեմ):

6. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ միջնորդության քննարկման մասին

ք.Երևան 22 մայիսի 2015թ.

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, Բակուր Օհանյանի նկատմամբ «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժ կիրառելու վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի միջնորդությունը քրեական գործերով իր լիազորություններն իրականացնելի դատավարական նորմերի կոպիտ խախտումներ թույլ տալու վերաբերյալ, պարզեց, որ տվյալ պարագայում լիազորությունների դադարեցում կարգապահական տույժ կիրառել համաչափ չէ կատարված խախտումներին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ

քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 13-րդ կետի 3-րդ ենթակետով. 25-26-րդ կետերով, 78-րդ և 82-րդ՝ փակ քվեարկությամբ (5 կողմ, 3 դեմ) ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, Բակուր Օհանյանի նկատմամբ «լիազորությունների դադարեցում» կարգապահական տույժի կիրառումը համարել անհնար և ՀՀ քննչական կոմիտեի նախագահին առաջարկել նրա հայեցողությամբ կիրառել «կոչումի իջեցում մեկ աստիճանով,» կամ «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով» կարգապահական տույժերից մեկը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

5 հունիսի 2015թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ Դավիթ Դավթյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, Դ.Դավթյանին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2015թ. մայիսի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության պետ Թ.Շուշանյանը զեկուցագիր է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին՝ հայտնելով, որ նույն մարզի քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ Դավիթ Դավթյանը նախ բանավոր ապա գրավոր զեկուցագրով տեղեկացրել է իրեն, որ Թումանյանի քննչական բաժնում հերթապահության ժամանակ՝ 27.04.2015թ. ժամը 08.30-ի սահմաններում, Վրաստանի սահման-Ալավերդի ավտոճանապարհի 25-րդ կիլոմետրի հատվածում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային դեպքի վայրի զննության ժամանակ կորցրել է ծառայողական վկայականը:

Վերը նշված խախտման վերաբերյալ քննիչ Դ.Դավթյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ 2014 թվականի սեպտեմբերի 19-ին նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի քննիչի պաշտոնում և ստացել 471 համարի ծառայողական վկայականը: 2015 թվականի ապրիլի 27-ին, առավոտյան ժամը 07:30-ի սահմաններում,
ՀՀ ոստիկանության Թումանյանի բաժնի հերթապահ մասից տեղեկանալով,որ Վրաստանի սահման-Ալավերդի ավտոճանապարհի 25-րդ կիլոմետրի հատվածում տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, համապատասխան քննչական գործողություններ կատարելու համար մեկնել է դեպքի վայր՝ իր հետ վերցնելով նաև ձեռքի պայուսակը՝ /բարսետկա/, որի մեջ այլ անձնական իրերի հետ մեկտեղ եղել է նաև ծառայողական վկայականը: Մինչև ժամը 10:20-ը մնացել է դեպքի վայրում, կատարել համապատասխան քննչական գործողություններ, որից հետո վերադարձել է Թումանյանի քննչական գործողությունների, մասնավորապես՝ վերցրել բացատրություններ, նշանակել դատաբժշկական փորձաքննություններ և այլն: Աշխատանքներն ավարտելուց հետո, երբ ցանկացել է դուրս գալ ընդմիջման՝ հայտնաբերել է, որ պայուսակը բացակայում է: Պայուսակը նախ փնտրել է աշխատասենյակում ապա ավտոմեքենայում և այն չհայտնաբերելով մեկնել է Վրաստանի սահման-Ալավերդի ավտոճանապարհի 25-րդ կիլոմետրում տեղի ունեցած պատահարի դեպքի վայր՝ սակայն ապարդյուն: Վերադառնալով աշխատավայր, կրկին անգամ զննել է աշխատասենյակը, սակայն արդյունքի չհասնելով՝ մտածելով,որ որ Թումանյանը փոքր քաղաք է և գրեթե բոլորն իրար ճանաչում են ու հնարավոր է ինչ-որ մի քաղաքացի գտնի այն և տեսնելով նկարը՝ իրեն ճանաչի և վերադարձնի, այդ իսկ պատճառով որոշել է մի քանի օր սպասել և վկայականի կորստյան մասին ղեկավարությանը չի հայտնել: Շուրջ 20 օր սպասելով և դարձյալ հնարավոր բոլոր վայրերով փնտրելով ու տեսնելով, որ վկայականը չի հայտնաբերվում, կատարվածի մասին զեկուցել է իր անմիջական վերադաս՝ Թումանյանի քննչական բաժնի պետ Է. Կարապետյանին, ով էլ իր հերթին՝ մարզային քննչական վարչության պետ Թ.Շուշանյանին: Նույն օրն էլ վկայականի կորստյան վերաբերյալ ներկայացրել է զեկուցագիր: Նշել է նաև, որ երբեք իր ծառայողական վկայականը ոչ մի տեղ չի գրավադրել, այլ անձի չի հանձնել: Մտածելով, որ հնարավոր է ինչ-որ մեկը գտնի վկայականը և հետ վերադարձնի, այդ իսկ պատճառով անմիջապես վերադասին չի զեկուցել և միայն 20 օր անց համոզվելով,որ վկայականը այլևս չի գտնվի,այդ մասին հայտնել է վերադասին:

Հանձնաժողովը լսելով բացատրությունը և ուսումնասիրելով նյութերը պարզեց, որ Դավիթ Դավթյանը խախտել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 08.09.2014թ. թիվ 4-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի ծառայողի անձնական կնիքների նմուշները և ծառայողական միասնական վկայականի նկարագրման ու տրամադրման կարգի 4-րդ կետի պահանջները:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ծառայողական վկայականը կորցնելու դրվագով Դ.Դավթյանի արարքում առկա են կարգապահական խախտման փաստն ու նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական

կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ծառայողական վկայականը կորցնելու դրվագով Դ.Դավթյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ 5, դեմ 0):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

05 հունիսի 2015թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի նախկին քննիչ, ներկայումս՝ Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի քննիչ Գառնիկ Մարգարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչության իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Շիրակի մարզի դատախազ Ր.Ասլանյանի 02.03.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության Ախուրյանի քննչական բաժնի նախկին քննիչ, ներկայումս Արարատի մարզային քննչական վարչության Մասիսի քննչական բաժնի քննիչ Գառնիկ Մարգարյանը վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Գ.Մարգարյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումն ըստ ստորև նշված դրվագի.

2015թ. մարտի 6-ին Շիրակի մարզի դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 18200315 քրեական գործը, որը 2015թ. մարտի 9-ին ուղարկվել է Շիրակի մարզային քննչական վարչություն՝ նախաքննություն կատարելու համար: Քննիչ Գ.Մարգարյանը 2015 թվականի մայիսի 6-ն որոշում է կայացրել թիվ 18200315 քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին՝ այսինքն նախաքննության ժամկետը լրանալու օրն է նման որոշում կայացրել՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի իմպերատիվ պահանջը:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Գ.Մարգարյանը Կարգապահականը հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է իր կողմից թույլ տված քրեադատավարական օրենքի կոպիտ խախտումը, ինչը թյուրիմացության արդյունք է:

Քրեական գործը վարույթ է ընդունել 2014թ. մարտի 9-ին, մտածել է, որ քրեական գործը ևս հարուցվել է նույն օրը:

Կարգապահական հանձնաժողովը լսելով բացատրությունը և ուսումնասիրելով նյութերը պարզեց, որ քննիչ Գ.Մարգարյանն իր դատավարական լիազորություններն իրականացնելիս դրսևորել է քրեադատավարական նորմերի ոչ պատշաճ իմացության, ինչի հետևանքով թույլ է տվել մինչդատական վարույթի արդյունավետությունը և բնականոն ընթացքը խաթարող խախտում՝ առերևույթ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197-րդ հոդվածի 6-րդ մասի իմպերատիվ պահանջը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Գ.Մարգարյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 18200315 քրեական գործով նախաքննության ժամկետը լրանալու օրը երկարացնելու միջնորդություն հարուցելու դրվագով Գ.Մարգարյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և մեղավորությունը (կողմ 4, դեմ 1):

2.Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

19 հունիսի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթի-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Սուրեն Դումանյանի նկատմամբ հարուցված

կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ Ջ.Ֆարխոյանի 20.05.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Մալաթի-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Սուրեն Դումանյանը վարույթում քննված թիվ 16144114, 16100415 և 16116015 քրեական գործերով նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Ս.Դումանյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Թիվ 16144114 քրեական գործով Գ.Մնացականյանին պատկանող ավտոտնակում և օժանդակ շինությունում կատարված խուզարկությամբ հայտնաբերված «Օպել» մակնիշի ավտոմեքենաների հափշտակության հանգամանքը ստուգելու ուղղությամբ՝ գրություն չի ուղարկել ՀՀ ճանապարհային ոստիկանություն՝ դրանց սեփականատերերին պարզելու և հարցաքննելու համար: ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում Ն.Մնացականյանի նկատմամբ քննվող քրեական գործով անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով հարցումը կատարել է ուշացումով՝ 5 ամիս անց:

Հիշյալ առերևույթ իրավախախտումների վերաբերյալ Ս.Դումանյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ խուզարկությամբ հայտնաբերված ավտոմեքենաների հետախուզման մեջ գտնվելու, ինչպես նաև դրանց սեփականատերերին պարզելու վերաբերյալ ՀՀ ճանապարհային ոստիկանությանը հարցում չի կատարել, բավարարվելով միայն ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնին ոչ ամբողջական բովանդակությամբ հարցում կատարելով, որի պատասխանը նույնիսկ չի ստացվել, իսկ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությանը ժամանակին գրություն չի ուղարկել անձնական խնդիրների և ծանրաբեռնվածության պատճառով:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ քննիչի կողմից պատկան մարմիններին հարցումներ ուղարկելն իրենից հրատապություն է ներկայացրել և հապաղումը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2.Ն.Մնացականյանն իր 18.04.2015թ. լրացուցիչ ցուցմունքում նշել է, որ արծաթագույն «Օպել» մակնիշի ավտոմեքենան վարձակալել է Բաբկենից, ում վերաբերյալ այլ տվյալներ չգիտի: Նման պայմաններում քննիչը Բաբկենի ինքնությունը պարզելու ուղղությամբ որևէ միջոց չի ձեռնարկել, հետաքննության մարմնին հանձնարարություն չի տվել:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դումանյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում ոմն Բաբկենի ինքնությունը պարզել է ավելի ուշ, վերջինս հանդիսացել է Բաբկեն Լևոնյանը: Նրան հարցաքննել է քրեական գործով վարույթը կասեցնելուց մի քանի օր առաջ, ով քննությանը հետաքրքրող տեղեկություններ չի հայտնել:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նախաքննության ընթացքում թեև Բաբկեն Լևոնյանը հարցաքննվել է ուշացումով, սակայն հաշվի առնելով, որ նա քննությանը հետաքրքրող էական նշանակություն ունեցող ոչինչ չի հայտնել, հետևաբար նշված դրվագով քննիչ Ս.Դումանյանի գործողություններում բացակայում է կոպիտ խախտման փաստը:

3. 19.02.2015թ. ոստիկանության Մալաթիայի բաժնից քննչական բաժնում գրություն է ստացվել, որ Ն. Մնացականյանն օգտագործել է 077-31-62-18 բջջային հեռախոսահամարը, որից հետո քննիչը շուրջ 15 օր քրեական գործով ոչ մի գործողություն չկատարելով, 06.03.2015թ. նոր միայն որոշում է կայացրել Ն.Մնացականյանի օգտագործած բջջային հեռախոսահամարից կայացած զանգերի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները, նշված հեռախոսազանգերը սպասարկած ալեհավաք կայանների տեղակայման վայրերը ստանալու միջնորդություն հարուցելու մասին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դումանյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ այդ ընթացքում զբաղված է եղել վարույթում քննվող այլ քրեական գործերով քննչական գործողություններ կատարելով և Ն.Մնացականյանի օգտագործած բջջային հեռախոսահամարից կայացած մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները ստանալու որոշումը ուշացումով կայացնելը ապացույցի կորստի չի հանգեցրել:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Ն.Մնացականյանի օգտագործած բջջային հեռախոսահամարի զանգերի վերծանումները 15 օր ուշացումով պահանջելը ապացույցների կորստի չի հանգեցրել, որպիսի պայմաններում Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Ս.Դումանյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

4. Թիվ 16100415 քրեական գործով քննիչ Ս.Դումանյանը չի կատարել հսկող դատախազի օրինական ցուցումի պահանջները, մասնավորապես՝

-«ՍԷԿՏ» համակարգի միջոցով չի պարզել Սվետլանա Հովհաննիսյանի ՀՀ-ից բացակայելու հանգամանքը, այն պայմաններում, երբ Ս.Հովհաննիսյանը բացակայել է հաշվառման վայրից և քննության ընթացքում հնարավոր չի եղել նրան հայտնաբերել: Քրեական գործում առկա են ծանուցագրեր, բերման ենթարկելու մասին որոշում, հանձնարարություն հետաքննության մարմնին, սակայն ձեռնարկված միջոցառումները դրական արդյունք չեն տվել:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դումանյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է թույլ տված խախտումը՝ «ՍԷԿՏ» համակարգի միջոցով հարցումը կատարել է ուշացումով, քանի որ սույն թվականի մայիս ամսին դստեր առողջական վիճակի հետ կապված առաջացել են խնդիրներ:

ՈՒսումնասիրելով նյութերը Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ նախաքննության ընթացքում հնարավոր չի եղել հայտնաբերել Ս.Հովհաննիսյանին, վերջինս բացակայել է բնակության վայրից և նման պայմաններում Ս.Հովհաննիսյանի ՀՀ-ում գտնվելու կամ ՀՀ-ից բացակայելու հանգամանքն իրենից հրատապություն է ներկայացրել, ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում հարցումը կատարվել է ուշացումով և նշված դրվագով քննիչ Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

5.Քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության պայմաններում որոշում չի կայացրել Սվետլանա Հովհաննիսյանին որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դումանյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է թույլ տված խախտումը՝ նախաքննության ընթացքում իր կողմից բավարար ապացույցների համակցություն է ձեռք բերվել Ս. Հովհաննիսյանին որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին, սակայն ինքը նման որոշումներ կայացրել է միայն՝ 04.06.2015թ.:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ օրենքով նախատեսված իրավական և ակնհայտ փաստական հիմքերի առկայության դեպքում Ս.Հովհաննիսյանին քրեական դատավարության մասնակցի կարգավիճակ չտալու դրվագով քննիչ Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

6.ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի միջոցով չի պարզել Գ.Ներսիսյանի խցում տվյալ ժամանակահատվածում Վարդան անունով անձնավորություն լինելու հանգամանքը, կալանավոր Գ.Ներսիսյանի հարցաքննության ժամանակ Վարդանի վերաբերյալ որևէ հարցադրում չի կատարել, այն պայմաններում, երբ քրեական գործով ձեռք բերված տվյալների համաձայն Սվետլանա Հովհաննիսյանը հանդիսացել է Վարդանի ընկերուհին:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դումանյանը կարգապահական հանձնաժողովին որևէ հստակ պարզաբանում չներկայացրեց, հայտնելով, որ Գ.Ներսիսյանն իր ցուցմունքում նշել է, որ ինչպես Մ.Խաչատրյանը, այնպես էլ մյուս անձինք, ում անունները չի հիշել եղել են իր խաբեության «զոհը»: Ինքն ի սկզբանե ցանկացել է այդ անձնագրով տարաժամկետ վճարման կարգով գույք ձեռք բերել և նյութական օգուտ ստանալ:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ վկա Գ.Ներսիսյանի 03.04.2015թ. հարցաքննության ժամանակ ոմն Վարդանի վերաբերյալ հարցադրումներ չեն կատարվել, որպիսի պայմաններում նշված դրվագով Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

7.Ձեռնամուխ չի եղել ստանալու գործով տուժող Մ. Առաքելյանի և վկաներ՝ Ռ. Խաչատրյանի, Մ. Խաչատրյանի, Ս. Ներսիսյանի բջջային հեռախոսահամարներից կայացած զանգերի վերծանումները և չի կատարել դրանցից բխող քննչական գործողություններ, ինչպես նաև չի պարզել առերևույթ հանցանք կատարած անձի Ս.Հովհաննիսյանի բջջային հեռախոսահամարը:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դումանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում պլանավորել է կատարել այդ գործողությունները, սակայն ծանրաբեռնվածության պատճառով չի հասցրել կատարել դրանք:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ հանցակցությամբ խարդախությունը կատարելու հանգամանքը պարզելու ուղղությամբ անհրաժեշտ է եղել ստանալ Մ. Առաքելյանի, Ռ. Խաչատրյանի, Մ. Խաչատրյանի, Ս. Ներսիսյանի բջջային հեռախոսահամարներից կայացած զանգերի վերծանումները և կատարել դրանցից բխող քննչական գործողություններ, ինչպես նաև անհրաժեշտ է եղել պարզել Ս.Հովհաննիսյանի բջջային հեռախոսահամարը, ինչն ապացուցողական նշանակություն կարող էր ունենալ քրեական գործի համար: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

8. Ցուցմունքներում առկա հակասությունների շուրջ առերես հարցաքննություն չի կատարել Մ. Առաքելյանի և Ռ. Խաչատրյանի, Ռ. Խաչատրյանի և Գ. Ներսիսյանի միջև:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դումանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ վերը նշված անձանց առերես չի հարցաքննել, քանի որ նրանց ցուցմունքներում էական հակասություններ չեն եղել:

ՈՒսումնասիրելով նյութերը Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Մ. Առաքելյանի և Ռ. Խաչատրյանի, Ռ. Խաչատրյանի և Գ. Ներսիսյանի ցուցմունքների միջև էական հակասություններ չեն եղել, մասնավորապես՝ տուժող Մ.Առաքելյանը իր ցուցմունքում նշել է, որ վկա Ռ.Խաչատրյանը իր անձնագիրը խնդրել է բանկային հաշիվ բացելու և դրամական փոխանցումներ ստանալու նպատակով, իսկ Ռ.Խաչատրյանը իր հերթին նշել է, որ Մ.Առաքելյանից անձնագիրը խնդրել է ոսկի գրավադնելու և վարկ վերցնելու նպատակով: Ռ.Խաչատրյանը ցուցմունք է տվել, որ նախկին փեսան՝ Գ.Ներսիսյանը զանգահարել է իրեն և խնդրել գործարք կատարելու հարցում օգնել իրեն, սակայն Գ.Ներսիսյանը նշել է, որ այդ հարցով զանգահարել և խնդրել է նախկին կնոջը՝ Մ.Խաչատրյանին, որպիսի պայմաններում Ս.Դումանյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

9. Քրեական գործով բավարար հիմքեր ունենալով այն մասին, որ ոմն Նոնան տուժող Մ.Առաքելյանի անձնագրով Կիևյան փողոցում գտնվող համակարգչային խանութից գնել է համակարգիչ, ինչպես նաև Մ.Խաչատրյանին վերադարձրել է Մ. Առաքելյանի անձնագիրը՝ Նոնայի ինքնությունը պարզելու և քննությանը ներկայացնելու ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկել:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դումանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ տեղյակ է եղել, որ Արաբկիրի քննչական բաժնում նշված հանցանքը կատարելու համար քրեական գործ է քննվել, քանի որ թիվ 16100415 քրեական գործով նախաքննության ընթացքում հարցումներ են ստացվել Արաբկիրի քննչական բաժնից: Նախաքննության ընթացքում՝ 04.06.2015թ. հանձնարարություն է տվել ոստիկանության Մալաթիայի բաժնին՝ ոմն Նոնայի ինքնությունը պարզելու և քննչական բաժին ներկայացնելու համար:

ՈՒսումնասիրելով նյութերը Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ Մ.Առաքելյանի անձնագրով Կիևյան փողոցի վրա գտնվող համակարգչային խանութից ապառիկ կարգով համակարգիչ գնելու դեպքի առթիվ Արաբկիրի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ, որի ընթացքում Ս.Հովհաննիսյանի կարգավիճակի վերաբերյալ համապատասխան հարցումներ են ուղարկվել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների քննչական բաժին: 29.03.2014թ.որպես վկա հարցաքննության ժամանակ Մ.Խաչատրյանը հայտնել է ոմն Նոնայի մասին, որից հետո քննիչը շուրջ 66 օր անց միայն հանձնարարություն է տվել հետաքննության մարմնին, իսկ Արաբկիրի քննչական բաժին ընդհանրապես հարցում չի կատարել պարզելու՝ քրեական գործի ընթացքի, ոմն Նոնայի ինքնության, նրա կարգավիճակի վերաբերյալ տեղեկություններ: Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

10. Ս.Դումանյանը 08.04.2015թ. որոշում է կայացրել քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին և որպես պատճառաբանություն նշել է, որ անհրաժեշտ է առերես հարցաքննել Մ.Խաչատրյանին և Ս.Ներսիսյանին, պարզել ոմն Վարդանի ինքնությունը և հարցաքննել նրան, մինչդեռ Մ.Խաչատրյանի և Ս.Ներսիսյանի առերես հարցաքննությունն արդեն իսկ կատարված է եղել՝ 20.03.2015թ., իսկ ոմն Վարդանի ինքնությունը պարզելու ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկել:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ս.Դումանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ 06.03.2015թ. որոշում է կայացրել քրեական գործի նախաքննության ժամկետը 1 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին և որպես պատճառաբանություն նշել է, որ անհրաժեշտ է առերես հարցաքննել Մ.Խաչատրյանին և Ս.Ներսիսյանին, պարզել ոմն Վարդանի ինքնությունը և հարցաքննել նրան, ստանալ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությանը հասցեագրված գրության պատասխանը: Այնուհետև՝ 08.04.2015թ. կրկին որոշում է կայացրել քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին և մեխանիկորեն արտատպել է նախկին որոշման մեջ նշված պատճառաբանությունները:

Ուսումնասիրելով նյութերը Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ տեխնիկական վրիպման հետևանքով արտատպվել են 06.03.2014թ. քրեական գործի նախաքննության ժամկետը 1 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ նախկինում նշված պատճառաբանությունները, որոնց մի մասն արդեն իսկ կատարված են եղել և նշված դրվագով Ս.Դումանյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

11. Թիվ 16116015 քրեական գործով տևական ժամանակով՝ 15.04.2015թ.-ից մինչև 19.05.2015թ. առանց իրավաչափ նպատակի դրսևորել է անգործություն՝ 14.04.2015թ. իր տրամադրության տակ ունենալով «Դվինհոլդինգ» ՓԲ ընկերության պահնորդ Լ.Մանուկյանի բջջային հեռախոսահամարը, շուրջ 36 օր անց՝ 20.05.2015թ. միայն որոշում է կայացրել նշված հեռախոսահամարից կայացած զանգերի վերծանումներն ստանալու միջնորդություն հարուցելու մասին: Հրատապություն պահանջող անձանց հարցաքննությունները կատարել է ուշացումով՝ քրեական գործ հարուցելուց շուրջ 2 ամիս անց: Ցուցմունքներում առկա էական հակասությունների շուրջ առերես չի հարցաքննել Լ.Մանուկյանին Տ.Սարգսյանի և Ս.Կարապետյանի հետ:

Հիշյալ առերևույթ իրավախախտումների վերաբերյալ Ս.Դումանյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ընդունում է իր կողմից թույլ տված վերը նշված դատավարական խախտումները, որոնք պայմանավորված են եղել իր դստեր՝ առողջական խնդիրներով: Հերթական արձակուրդ չի ձևակերպել, մտածելով, որ կարող է համատեղել աշխատանքն ու դստեր բուժման հետ կապված հարցերը:

ՈՒսումնասիրելով նյութերը, Կարգապահական հանձնաժողովը պարզեց, որ ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում քննիչն առանց իրավաչափ նպատակի տևական ժամանակով դրսևորել է անգործություն, մասնավորապես՝ 14.04.2015թ. իր տրամադրության տակ ունենալով «Դվինհոլդինգ» ՓԲ ընկերության պահնորդ Լ.Մանուկյանի բջջային հեռախոսահամարը, շուրջ 36 օր անց միայն որոշում է կայացրել նշված հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները ստանալու միջնորդություն հարուցելու մասին: Հրատապություն պահանջող անձանց՝ Տ.Սարգսյանի, Ս.Կարապետյանի, Ռ.Սարգսյանի հարցաքննությունները կատարել է ուշացումով՝ քրեական գործ հարուցելուց շուրջ 2 ամիս անց: Լ.Մանուկյանի, Տ.Սարգսյանի և Ս.Կարապետյանի ցուցմունքներում առկա էական հակասությունների վերաբերյալ առերես հարցաքննություններ չի կատարել: Վերոգրյալ բոլոր քննչական գործողությունները քրեական գործի համար ունեցել են ապացուցողական կարևոր նշանակություն և ժամանակին դրանց չկատարելը հանգեցրել կամ ողջամտորեն կարող էր հանգեցնել ապացույցների կորստի, ուստի Ս.Դումանյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը: Այսինքն՝ վերոգրյալ քրեական գործերով նախաքննություն իրականացնելիս քննիչ Ս.Դումանյանի կողմից առերևույթ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, 216-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 16144114 քրեական գործով Գ.Մնացականյանին պատկանող ավտոտնակում և օժանդակ շինությունում կատարված խուզարկությամբ հայտնաբերված «Օպել» մակնիշի ավտոմեքենաների կապակցությամբ ոչ պատշաճ քննություն կատարելու, Արարատի մարզային քննչական վարչություն շուրջ 5 ամիս անց հարցում կատարելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝0):

2. Ոմն Բաբկենի ինքնությունը պարզելու նպատակով ուշացումով միջոցներ ձեռնարկելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը: (կողմ՝ 6, դեմ՝0):

3. Ն.Մնացականյանի օգտագործած բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները ստանալու միջնորդությունն ուշացումով հարուցելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը: (կողմ՝ 5, դեմ՝1):

4. «ՍԷԿՏ» համակարգի միջոցով Ս. Հովհաննիսյանի՝ ՀՀ-ից բացակայելու հանգամանքը ժամանակին չստուգելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝0):

5. Քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության պայմաններում Ս. Հովհաննիսյանին որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին որոշումներ ժամանակին չկայացնելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝0):

6. Գ.Ներսիսյանի խցում ոմն Վարդանի լինելու հանգամանքը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի վարչակազմի միջոցով չպարզելու, կալանավոր Գ.Ներսիսյանի հարցաքննության ժամանակ Վարդանի վերաբերյալ որևէ հարցադրումներ չկատարելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝0):

7. Մ.Առաքելյանի, Ռ. Խաչատրյանի, Մ.Խաչատրյանի, Ս.Ներսիսյանի բջջային հեռախոսահամարներից կատարված զանգերի վերծանումներն ստանալուն ձեռնամուխ չլինելու, Ս.Հովհաննիսյանի բջջային հեռախոսահամարը չպարզելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝0):

8. Մ.Առաքելյանի և Ռ. Խաչատրյանի, Ռ. Խաչատրյանի և Գ. Ներսիսյանի ցուցմունքներում առկա հակասությունների շուրջ առերես հարցաքննություններ չկատարելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 4, դեմ՝2):

9. Ոմն Նոնայի ինքնությունը պարզելու և քննությանը ներկայացնելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝0):

10. 08.04.2015թ.քրեական գործի նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ տեխնիկական վրիպակ թույլ տալու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝0):

11. Թիվ 16116015 քրեական գործով տևական ժամանակով՝ 15.04.2015թ.-ից մինչև 19.05.2015թ. առանց իրավաչափ նպատակի անգործություն դրսևորելու, ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում հրատապություն ներկայացնող քննչական գործողությունները ուշացումով կատարելու, Լ.Մանուկյանի հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները ստանալու միջնորդությունն շուրջ 36 օր ուշացումով հարուցելու, քրեական գործով անցնող մի շարք անձանց ցուցմունքներում առկա էական հակասությունների վերաբերյալ առերես հարցաքննություններ չկատարելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝0):

12. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին: